



Հայաստանի
ՔՀԿ-ների
Հակակոռուպցիոն
Կոալիցիա



ԿԱՐԾԻՔ-ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022ԹԹ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

Երևան
Օգոստոս, 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

Դիտարկումներ և առաջարկություններ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի վերաբերյալ

Դիտարկումներ և առաջարկություններ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրի նախագծի վերաբերյալ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների ամփոփում

ՀԱՎԵԼՎԱԾ 2. «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ միջազգային լույսի ներքո» թեմայով կառավարություն-քաղաքացիական հասարակություն փորձագիտական միջազգային համաժողովի ամփոփում

ՆԱԽԱԲԱՆ

2018 թվականի դեկտեմբերի 19-ին ՀՀ արդարադատության նախարարությունը իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում (այսուհետ՝ e-draft.am) հանրային քննարկման էր ներկայացրել «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի» նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որի վերաբերյալ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի (այսուհետ՝ Կոալիցիա) քարտուղարության աշխատանքները համակարգող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն (այսուհետ՝ ԻՀԱ) նշված կայքում տեղադրել է Կոալիցիայի կարծիք-դիրքորոշումը և առաջարկությունները:¹ 2019 թվականի հունիսի 10-ին ՀՀ արդարադատության նախարարությունը e-draft.am կայքում հրապարակել է արդեն Նախագծի լրամշակված տարբերակը (այսուհետ՝ Լրամշակված նախագիծ), սակայն հարկ ենք համարում նշել, որ նշված կայքի «ԱՄՓՈՓԱԹԵԲ» բաժնում մինչ այսօր տեղադրված չէ Կոալիցիայի կողմից ներկայացված առաջարկությունների վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության դիրքորոշումներն ու եզրահանգումները և միայն ԻՀԱ-ի կողմից ՀՀ արդարադատության նախարարություն համապատասխան գրություն ուղարկելուց հետո սույն թվականի հուլիսի 3-ին տրամադրվել է պահանջվող ամփոփաթեթը:

Միաժամանակ նշենք, որ Նախագծի վերաբերյալ, որը առաջին անգամ հանրային քննարկման էր ներկայացվել 19.12.2018-31.01.2019թթ. ժամանակահատվածում,² e-draft.am-ում տեղադրված չեն այն կազմակերպությունների առաջարկությունները, որոնք գրավոր կամ պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով ներկայացրել են նախագիծը մշակող մարմին, ինչի արդյունքում նախագիծը մշակող մարմինը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը խախտել է **ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշմամբ սահմանված կարգը**: Մասնավորապես, որոշման 17-րդ կետի համաձայն՝ *«Հանրային քննարկումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք միասնական կայքում կամ հանրային քննարկում իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված համապատասխան միասնական կայքին հղման միջոցով հրապարակված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկությունները՝ նախապես գրանցվելով՝ նշելով անունը, ազգանունը (իրավաբանական*

¹ Կոալիցիայի կարծիք-դիրքորոշում և առաջարկություններին կարող էք ծանոթանալ նաև հետևյալ հղմամբ՝ <https://armla.am/40874.html>:

² «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի» նախագծի առաջին տարբերակին կարող էք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ <https://www.e-draft.am/projects/1439/about>:

անձի անվանումը), էլեկտրոնային փոստի հասցեն, գաղտնաբառը, ցանկության դեպքում՝ բնակության (գտնվելու վայրի) հասցեն, հեռախոսահամարը: Առաջարկությունները կարող են ներկայացվել կայքում՝ առցանց լրացման եղանակով կամ **գրավոր, այն է՝ հանրային քննարկում իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքին ուղարկելու կամ այդ մարմնին թղթային տարբերակով հանձնելու եղանակով**:՝ Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ «Սույն կարգի 17-րդ կետում նշված առաջարկությունները հանրային քննարկում իրականացնող մարմնի կողմից հաստատվում են ստանալուց հետո ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում միասնական կայքում երևալու նպատակով, իսկ լրացվում են ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում: **Գրավոր ներկայացված առաջարկությունները հանրային քննարկում իրականացնող մարմնի համապատասխան աշխատակցի կողմից հաստատվում և լրացվում են միասնական կայքի ադմինիստրատիվ մասի համապատասխան բաժնում՝ ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում**»:

Այսպիսով, **առաջարկում ենք** հրապարակել այն առաջարկությունները, որոնք վերաբերվել են Նախագծի սկզբնական տարբերակին՝ ապահովելով այս գործընթացներում թափանցիկություն ու հաշվետվողականությանը հանրության առջև:

Հայտնում ենք նաև, որ Նախագծի ամփոփաթերթից պարզ է դառնում, որ Կոալիցիայի կողմից ներկայացված 61 առաջարկություններից թվով 14-ն ամբողջությամբ ընդունվել է, 5-ը չի ընդունվել, ի գիտություն է ընդունվել թվով 18-ը, իսկ 24 առաջարկություն ընդունվել է մասնակի:³

Ստորև Կոալիցիան և ԻՀԱ-ն ներկայացնում են իրենց դիտարկումներն ու առաջարկությունները ըստ՝

- 1) **Լրամշակված նախագծի N 1 հավելվածով հաստատվող Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն)**
- 2) **Լրամշակված նախագծի N 2 հավելվածով հաստատվող Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրի (այսուհետ՝ Միջոցառումներ ծրագիր)**

³ Սույն վիճակագրությունը վերաբերվում է 2019 թվականի հունվարի 31-ին ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացված Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Իրավաբանների հայկական ասոցիացիայի «Կարծիք-դիրքորոշում և առաջարկություններ «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի» նախագծի վերաբերյալ» փաստաթղթով ներառված առաջարկություններին:

1. Դիտարկումներ և առաջարկություններ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի վերաբերյալ

I. Ռազմավարության 17-րդ կետում նշվում է, որ. «Հակակոռուպցիոն նախորդ ռազմավարության միջոցառումների շրջանակներում համարժեքորեն գատորոշված չէր հակակոռուպցիոն քաղաքականության իրացման ինստիտուցիոնալ մարմինների համակարգը, սահմանված չէր հատկապես կոռուպցիայի դեմ պայքարի հարցում որոշակի մասնագիտացված մարմնի առկայության պարտադիր պահանջ, որի հետևանքով կոռուպցիայի դեմ պետության կողմից վարվող քաղաքականությունն իրականում տարրալուծվում էր բազմաթիվ պետական մարմինների գործառույթային իրավասության զանազան տիրույթներում՝ կորցնելով համակարգայնության և միասնականության հատկանիշները: Սա իր հերթին հանգեցնում էր կոռուպցիայի դեմ ապարդյուն պայքար մղելուն:»:

Վերոգրյալի առնչությամբ հայտնում ենք, որ դեռևս 2016 թվականի հունիսին Կոալիցիան և ԻՀԱ-ն ՀՀ արդարադատության նախարարի հունվարի 22-ի թիվ 19-ա հրամանով ստեղծված աշխատանքային խմբի շրջանակներում իրականացրել է 35 երկրների հակակոռուպցիոն մարմինների փորձի ուսումնասիրություն: Արդյունքում, Կոալիցիան Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստում⁴ առաջարկել էր՝ Հայաստանում ձևավորել *Կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված անկախ ունիվերսալ մարմին՝ Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի բյուրո*՝ օժտված երեք հիմնական գործառույթներով. կրթական, կանխարգելիչ, իրավապահ (այդ թվում՝ նախնական քննության): Քաղաքական բավարար կամքի բացակայությամբ պայմանավորված՝ սույն տարբերակի իրականացման անհնարինության դեպքում միայն, Կոալիցիան որպես պահեստային տարբերակ, առաջարկել էր երկրորդ տարբերակ. ստեղծել երկու առանձին մարմիններ.

1. Անկախ հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմին, որը կիրականացնի հակակոռուպցիոն կրթության և կոռուպցիայի կանխարգելման գործառույթները,
2. Կոռուպցիոն հանցագործություններ քննող իրավապահ մարմին, որը կստեղծվի հատուկ քննչական ծառայության կարողությունների հենքի վրա և օժտված կլինի նաև նախնական քննություն իրականացնելու գործառույթներով:

⁴ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի 2016 թվականի հունիսի 15-ի և 17-ի նիստերի արձանագրությանը կարող էք ծանոթանալ այստեղ.

https://www.gov.am/u_files/file/KORUPCIA%2015_06_16%20ev%2017_06_16.pdf

Արդյունքում, նախորդ կառավարությունը, բավարար քաղաքական կամք չցուցաբերելով, նախընտրելի համարեց Կոալիցիայի կողմից ներկայացրած երկրորդ՝ **պահեստային տարբերակը**, ինչի արդյունքում էլ 2017 թվականի հունիսի 9-ին ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը: Նշվածի համատեքստում կարևորվում է, թե ի՞նչ է փոխվել Հայաստանում 2018 թվականի գարնանը տեղի ունեցած հեղափոխությունից հետո, որի ընթացքում նորընտիր իշխանությունները ձևավորվել էին կոռուպցիայի դեմ անզիջում պայքար մղելու հանրային օրակարգ: Մասնավորապես, երկրի ղեկավարումը ստանձնած քաղաքական իշխանությունն այսօր այդ խնդրի լուծման ուղղությամբ **ի՞նչ հեղափոխական և համակարգային լուծումներ ունի** և Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգ ներդնելու տեսանկյունից **ի՞նչ է առաջարկվում Ռազմավարությամբ:**

Հարկ է ընդգծել, որ թեև Ռազմավարության 59-րդ կետում նշվում է, որ. *«Նոր իրողությունները փաստեցին, որ ՀՀ կառավարությունը դրսևորում է անհրաժեշտ և բավարար քաղաքական կամք կոռուպցիայի դեմ պայքարում էական արդյունք արձանագրելու հարցում: Այդուհանդերձ, քաղաքական կամքին զուգընթաց կարևորվում է կոռուպցիայի դեմ պայքարի համակարգված իրականացումը: Այս առումով հաջողության հասնելու գլխավոր գրավականներից մեկը կայացած հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի առկայությունն է»*, սակայն Հայաստանում **հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ներդրման առումով Ռազմավարությամբ շրջադարձային փոփոխություններ չեն առաջարկվում:** Ռազմավարության 60-րդ կետով ամրագրված է, որ *«...առաջարկվում է հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի հետևյալ՝ առանձնացված մոդելի տեսլականը՝ վերջինիս արդարացման դեպքում ունիվերսալ մոդելին անցում կատարելու հնարավոր հեռանկարներով»:*

Հաշվի առնելով, որ հետագա շարադրանքում, ըստ Ռազմավարության կետերի հաջորդականության, **առանձին-առանձին անդրադարձ է կատարվելու հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի առանձնացված մոդելի ներդրմամբ ստեղծվելիք մարմիններին**, ստորև ներկայացնում ենք, թե հակակոռուպցիոն պայքարում ինչպիսի՞ լուծումներ է առաջարկում Կոալիցիան և ԻՀԱ-ն՝ կենտրոնացված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ներդրման միջոցով:

Այսպես, կենտրոնացված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը՝ *հանձինս Կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված, անկախ ունիվերսալ մարմնի (հետագա տեքստում՝ ունիվերսալ մարմին)*, հնարավորություն է ընձեռում կոռուպցիայի դեմ պայքարի ապակենտրոնացված մոդելից անցում կատարելու կենտրոնացված մոդելի: Փորձը ցույց է տալիս, որ, հակակոռուպցիոն երկու և ավելի մարմինների փոխարեն, մեկ միասնական մոդելի ընտրությունը *բարձրացնում է հակակոռուպցիոն մարմնի գործունեության արդյունավետությունը, համակարգվածությունը ու ներքին համագործակցության մակարդակը, տնտեսվում են պետության կողմից հասկացվող ֆինանսական ռեսուրսները, բացառվում է տարբեր մարմինների կողմից նույն գործառույթը իրականացնելու պրակտիկան*: Այն ավելի արդյունավետ է գործում, հաշվի առնելով, որ ռեսուրսները մեկ հարկի տակ են գտնվում, ինչն ավելի դյուրին է դարձնում բոլոր գործառույթների իրականացումը, որոնք փոխկապակցված են: Չեզոքանում է *գերատեսչական շահերի ռիսկը*, նվազում են շահերի բախման իրավիճակները և միջգերատեսչական անառնող մրցակցությունը:

Արդյունքում ունենում ենք մի մարմին, որը ֆունկցիոնալ առումով, օժտված է լինում ոչ միայն հակակոռուպցիոն պայքար մղելու այնպիսի կարևորագույն գործիքներով, ինչպիսիք են՝ *հակակոռուպցիոն կրթության, կանխարգելման և իրավապահ գործառույթները*, այլև այդ մարմինը ամբողջական պատասխանատվություն է կրում կոռուպցիայի դեմ պայքարում գրանցված արդյունքների համար: Հարկ ենք համարում նաև նշել, որ միջազգային պրակտիկայում ընդունված է, որ *ունիվերսալ մարմինն* ինքն է մշակում իր գործունեության ծրագիրը և ձեռնամուխ լինում այդ ծրագրի իրականացմանը:

Վերը նշվածը առավել շոշափելի դարձնելու նպատակով, ստորև ներկայացնում ենք կենտրոնացված և ապակենտրոնացված *հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգերի թերություններն ու առավելությունները*, ինչպես նաև *ընդհանուր չափանիշները*, որոնք պետք է կիրառվեն հակակոռուպցիոն մարմնի նկատմամբ՝ անկախ մոդելի ընտրությունից:

Ս) Ի՞նչ առավելություններ ունի կենտրոնացված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը.

1. Մեկ միասնական պատասխանատու մարմնի առկայություն: Կենտրոնացված՝ մեկ միասնական ունիվերսալ մարմինը պատասխանատու կլինի և կհամակարգի

Հայաստանում հակակոռուպցիոն գործուղություններն ու միջոցառումները, որը կոչվում է հակակոռուպցիոն մարմին՝ 3 ուղղություններով (կանխարգելում, կրթություն, իրավապահ) գործող ստորաբաժանումների միջև տեղեկությունների փոխանակումը, առողջ համագործակցությունը և միասնական նպատակի իրագործմանը հասնելու գործընթացը: Մա մարմնի համար կստեղծի արդյունավետ գործելու միջավայր, ինչպես նաև հնարավորություն կընձեռի մարմնին՝ գնահատել և վերլուծել Հայաստանում տիրող հակակոռուպցիոն իրական վիճակը՝ ըստ 3 ուղղությունների: Այսպիսով, կենտրոնացված մարմինը նպաստում է կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությունների **համակարգայնությունն ու միասնականությունը՝ վերացնելով պետական մարմինների գործառնության իրավասությունները՝ տարբեր տիրույթներում:**

- 2. Պետական ռեսուրսների, այդ թվում ֆինանսների արդյունավետ ծախսում և գործառնության կրկնողության բացառում:** Կենտրոնացված համակարգի դեպքում կխնայվեն հատկացված պետական, այդ թվում ֆինանսական ռեսուրսները և կբացառվի գործառնության կրկնությունը տարբեր պետական մարմինների կողմից: Այսպես, ունիվերսալ մարմինը իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է հատկացվող **ֆինանսական միջոցների արդյունավետ տնօրինման սկզբունքով:** Մարմնի ֆինանսական անկախությունն ապահովելու նպատակով պետական բյուջեի հատուկ տողով մարմնին ֆինանսական միջոցներ են հատկացվում: Միասնական մարմին ունենալու դեպքում **կբացառվի ֆինանսական միջոցների ծախսումը նույն գործառնության իրականացման համար՝ տարբեր պետական մարմինների կողմից:** Օրինակի համար նշենք, որ յուրաքանչյուր պետական մարմին իր գործունեության արդյունավետության ապահովման համար ունենում է առնվազն հետևյալ վարչությունները. մարդկային ռեսուրսների կառավարման, ֆինանսական և հաշվապահական հաշվառման, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի, արտաքին կապերի, ներքին աուդիտի, տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի հատուկ համակարգերի, քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման և այլն, ինչպես նաև պետական գույք, հանրային միջոցներ, որոնց համար պետական բյուջեից տարեկան կտրվածքով հատկացվում են ֆինանսական միջոցներ և պետական գույք: Ստացվում է, որ կոռուպցիայի դեմ պայքարի ապակենտրոնացված համակարգ ունենալու ունենալու պարագայում հիշյալ

վարչությունները կատարելու են նույնանման գործառույթներ, և նրանց տրամադրվելու է պետական գույք ու հանրային միջոցներ:

Հարկ ենք համարում նշել, որ կառավարությունը պետական կառավարման համակարգն օպտիմալացնելու, կրկնվող գործառույթները բացառելու, պետական կառավարման համակարգի մարմիններին հատկացվող պետական միջոցների օգտագործումը արդյունավետ դարձնելու քաղաքականություն է վարում, հետևաբար, կենտրոնացված համակարգի դեպքում կապահովվի կառավարության որգեղրած քաղաքականությունը:

3. Կենտրոնացված համակարգի երեք թևերի միջև անառողջ մրցակցության բառացում և միջգերատեսչական շահերի կառավարում: Կենտրոնացված համակարգի դեպքում չեզոքանում է համակարգի երեք թևերի (կանխարգելիչ, կրթություն և իրավապահ) միջև անառողջ մրցակցությունը, սրանով պայմանավորված չեզոքանում է նաև կոռուպցիայի դեմ պայքար իրականացնող մարմինների միջև միջգերատեսչական անառողջ մրցակցությունը և գերատեսչական շահերի ռիսկը, նվազում են շահերի բախման իրավիճակները:

4. Հակակոռուպցիոն մարմինների գործունեության վերաբերյալ շփոթության բացառում հանրության շրջանում: Ապակենտրոնացված համակարգի դեպքում, Հայաստանում 4 հակակոռուպցիոն մարմիններ (*ըստ Ռազմավարության՝ Հայաստանում գործելու են հետևյալ չորս հակակոռուպցիոն մարմինները. Հակակոռուպցիոն կոմիտե, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, ՀՀ արդարադատության նախարարություն՝ հակակոռուպցիոն քաղաքականությունների մշակման և իրականացման մասով, Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ՝ խորհրդակցական մարմին*) գործելու պարագայում, հանրության մոտ բարձր կլինի շփոթության աստիճանը, թե կոնկրետ կոռուպցիոն կամ շահերի շախմատ կամ այլ՝ իրավախախտ գործողությունների դեպքում, ո՞ր մարմինն պետք է դիմել: Ավելին, ներկայումս, հանրությունը տեղեկանալով, որ օրինակ՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը ղեկավարում է ՀՀ վարչապետը, վերջինս կոռուպցիայի դեմ պայքարի բոլոր մարմինները նույնացնում է վարչապետի հետ և կոռուպցիոն բնույթի ցանկացած հարցով դիմում է վարչապետին:

Բ) Ի՞նչ թերություններ ունի կառավարության կողմից առաջարկվող ապակենտրոնացված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը.

1. **Երաշխավորված չէ այդ մարմինների փաստացի անկախությունը:** Կոռուպցիայի դեմ ինստիտուցիոնալ պայքարի արդյունավետությունը պահանջում է, որ այդ պայքարը ընթանա **իրավունքի գերակայության միջավայրում և ապահովված լինի կայուն սահմանադրաիրավական հիմքով:** Վերոնշյալ մարմինները (մասնավորապես՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ), Ռազմավարությամբ նախատեսված նոր ստեղծելիք Հակակոռուպցիոն կոմիտեն) չեն դասվում Սահմանադրությամբ նախատեսված անկախ մարմինների շարքին, այսինքն սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում չի երաշխավորվում այդ մարմինների անկախությունը: Ինչ վերաբերում է օրենսդրական կարգավորումներով երաշխիքներ ունենալուն, ապա պետք է նշենք, որ թեև կարգավորող օրենքով և Ռազմավարությամբ երաշխավորված է այդ մարմինների անկախ և ինքնավար լինելը, սակայն փաստացի այն չի գործում: Որպես ցայտուն օրինակ, կարող ենք բերել հատուկ քննչական ծառայության պետի հրաժարական տալը՝ երկրում տեղի ունեցող վերջին քաղաքական գործընթացների արդյունքում, այն դեպքում, երբ «Հանրային ծառայության մասին» օրենքի առումով այդ պաշտոնը ինքնավար պաշտոն է և այն զբաղեցնող անձն իր պաշտոնավարման ժամանակահատվածում չի փոփոխվում՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում: Անկախության երաշխիքի՝ վտանգի տակ լինելու մեկ այլ ցայտուն օրինակ է ՀՀ ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի կողմից հեղինակած «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը,⁵ որի ընդունման պարագայում առանց որևէ իրավական հիմնավորումների վերացվելու է մրցութային խորհուրդը: Օրենսդրի կողմից խորհրդի նախատեսումը ինքնանպատակ չէր. այս մարմինը պետք է ապահովի հանձնաժողովի անդամների նշանակման այնպիսի գործընթաց, որն ապահովում է **անդամների ապաքաղաքական դիրքորոշումը, անկողնակալությունը, չեզոքությունը, բարեխղճությունն ու իրավասությունը:** Սա նաև բխում է հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների մասին 2012 թվականի **Ջակարտայի սկզբունքներից** (այսուհետ՝ Ջակարտայի սկզբունքներ)⁶ : Այնուհետև, օրենքի նախագծով նախատեսվում է որ Հանձնաժողովի անդամի թեկնածուներից 5-ից 3-ին առաջադրում է իշխող ուժը՝ 1-ը Կառավարության կողմից և 2-

⁵ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծին կարող էք ծանոթանալ հետևյալ հղմամբ. <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10588&Reading=0&fbclid=IwAR1tTsQZRZO76ri8iuwmW-nLW54f6zXZD3YIEKQyP5kjoebb-zP44pXVbes>:

⁶ <https://armla.am/wp-content/uploads/2019/01/Jakarta-statement-2012.pdf>

ը՝ ԱԺ կառավարող խմբակցության կողմից: Ավելին, եթե ԱԺ ընդդիմադիր խմբակցությունները չկարողանան համախոհությամբ ներկայացնել թեկնածու, այդ անդամին ևս առաջադրում է իշխող ուժը՝ ի դեմս ԱԺ կառավարող խմբակցության: Վերջին՝ 5-րդ թեկնածուին էլ առաջադրում է ԲԴԽ-ն: Արդյունքում կստացվի, որ 5 անդամներից 4-ից նշանակում է իշխող ուժը: Նման իրավակարգավորումների պարագայում, անշուշտ, **անկախության երաշխիքները լուրջ կասկածի տակ են դրվում:**

2. **Երաշխավորված չէ հաշվետվողականություն սկզբունքը:** Անկախ նրանից, թե ինչ տեսակի մարմին է և ինչպիսի ինստիտուցիոնալ պատկանելիություն ունի, հակակոռուպցիոն յուրաքանչյուր մարմին պետք է ինտեգրված լինի զսպիչների և հակակշիռների համակարգում՝ **ժողովրդավարական կառավարում ապահովելու համար:** Ջակարտայի սկզբունքներից է **ներքին և արտաքին հաշվետվողականությունը**, հանրային հաղորդակցությունը և ներգրավվածությունը: Թեև **Հանձնաժողովի** գործունեությունը կարգավորող օրենքում խոսք է գնում հանրային և խորհրդարանական վերահսկողության մասին, սակայն այդ մարմնի գործունեությունը կարգավորող օրենքով չունի մասնագիտացված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից վերահսկողություն իրականացնելու ռեալ մեխանիզմ՝ հասարակական վերասկողության իրականացման խորհուրդ: Ռազմավարությամբ նախատեսված **Հակակոռուպցիոն կոմիտեի** դեպքում, առհասարակ, **հանրային հաշվետվողականության վերաբերյալ դրույթ առկա չէ:** Կոմիտեն հաշվետու է լինելու միայն Վարչապետին և խորհրդարանին, որոնց կարգավորումների վերաբերյալ իրավական կարծիք հնարավոր կլինի հայտնել օրենքի նախագծի առկայության դեպքում:
3. **Երաշխավորված չէ մարդկային ռեսուրսների հանդեպ իրավասություն ունենալու և արդյունավետ կառավարում իրականացնելու սկզբունքները՝ այդպիսի ռեսուրսների հավաքագրման պարզ և թափանցիկ ընթացակարգերի ներդնելու, աշխատանքից ազատելու տեսանկյուններից:** Ջակարտայի սկզբունքների համաձայն՝ հակակոռուպցիոն մարմինների ղեկավարները պետք է նշանակվեն մի գործընթացի միջոցով, որն ապահովում է նրանց **ապաքաղաքական դիրքորոշումը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեխղճությունն ու իրավասությունը:** Նույն սկզբունքների համաձայն՝ **աշխատանքից հեռացումը նույնպես պետք է իրականացվի միայն իրավականորեն հաստատված ընթացակարգով**, որը հավասարազոր է օրենքով պաշտպանված անկախ իրավասու մարմնի, ինչպես՝ Գլխավոր դատավորի պաշտոնազրկման ընթացակարգին: (Հայաստանի պարագայում՝ վճարեկ դատարանի նախագահը և նրա պաշտոնազրկման

ընթացակարգը): Ապակենտրոնացված մարմինների պարագայում վերոնշյալ սկզբունքները չեն պահպանվելու, քանի որ տարբեր մարմինների պարագայում կիրառելի են տարբեր իրավական գործընթացներ:

Այսպես, Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարմանն ու դադարեցման կարգավորումները, որոնք սահմանված են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով, չեն համապատասխանում վերը նշված սկզբունքներին: Օրինակ՝ Հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնում է Հանձնաժողովը: Ավելին, եթե Ազգային ժողովի ընդունի «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, **Հանձնաժողովի անդամների ընտրության և լիազորությունների դադարեցման գործընթացները կկրեն խիստ քաղաքականացված բնույթ, և կհակասեն Ջակարտայի հայտնի սկզբունքներին:**

- 4. Երաշխավորված չէ այդ մարմինների համար հատկացվող ֆինանսական միջոցների արդյունավետ տնօրինման սկզբունքը:** Ապակենտրոնացված ինստիտուցիոնալ համակարգում ընդգրկված մարմինների գործունեության համար ֆինանսական միջոցները հատկացվելու են յուրաքանչյուր տարվա պետական բյուջեից, ինչը նշանակում է, որ **ծախսատարության առումով** կոռուպցիայի դեմ պայքարող մի քանի մարմիններ ունենալը շատ ավելի թանկ է արժենալու պետության համար: Այս դեպքում կրկնվելու են գործառույթները, որոնք տարբեր մարմինների կողմից իրականացնելու համար հատկացվելու է պետական գույք և հանրային միջոցներ: Այս մասին անդրադարձ կատարվել է նաև կենտրոնացված մարմնի առավելությունների շարքում՝ *«Պետական ռեսուրսների, այդ թվում ֆինանսների խնայում և գործառույթների կրկնողության բացառում» կետի ներքո:* Հարկ ենք համարում նշել, որ ներկայիս կառավարությունը պետական կառավարման համակարգն օպտիմալացնելու, կրկնվող գործառույթները բացառելու, պետական կառավարման համակարգի մարմիններին հատկացվող պետական միջոցների օգտագործումը արդյունավետ դարձնելու քաղաքականություն է վարում, հետևաբար, հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ ապակենտրոնացված համակարգի ներդրումն ուղղակիորեն հակասում է տարվող քաղաքականությանը:
- 5. Ստվերային համակարգում ունենալու վտանգ:** Ապակենտրոնացված համակարգի՝ երկու առանձին հակակոռուպցիոն մարմինների առկայության դեպքում առկա է այդ մարմինների **ստվերային համակարգում ունենալու վտանգ:** Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ, այսպես թե այնպես, երկու առանձին մարմինների առկայության դեպքում

համակարգման կարիք է լինելու: Եվ այս տեսանկյունից, թերևս, առկա իրավակարգավորումները կարող են առաջացնել սովերային համակարգման վտանգ:

6. **Երաշխավորված չէ բարեղծությունը:** Օրենսդրությամբ և ռազմավարությամբ երաշխավորված չէ բարեղծությունը (**հաշվետվողականություն և թափանցիկություն + էթիկա + կոմպետենցիա - կոռուպցիա**)՝ որպես Հանձնաժողովի ու Կոմիտեի ղեկավարների ու աշխատողների պաշտոնի ընտրության-նշանակման կարևորագույն արժեհամակարգային հիմք:

9) **Համընդհանուր չափանիշներ, որ առաջարկում ենք կիրառել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմնի նկատմամբ՝ անկախ մոդելի ընտրությունից.**

1. **Անկախություն:** Հակակոռուպցիոն մարմնին պետք է օժտել **սահմանադրական անկախությամբ և երաշխիքներով**, այդ թվում նաև **անկախություն՝ քաղաքական ազդեցությունից:** Սահմանադրությամբ պետք է նախատեսել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմնի **հաշվետվողականությունը և թափանցիկությունը**, նախատեսելով 4 մակարդակի **վերահսկողություն. խորհրդարանական, հանրային, դատախազական, «դատական»** («դատական» վերահսկողություն ասելով նկատի ունենք, որ հակակոռուպցիոն մարմնի կողմից դատարան ուղարկված քրեական գործերը քննության են առնվելու հակակոռուպցիոն դատարանի կողմից, և կայացված դատավճիռը կծառայի որպես «վերահսկողության» գործիք՝ գնահատելու մարմնի իրավապահ գործառնության իրականացումը): Անկախության բարձր երաշխիքներով գործունեության իրականացումը բխում է **Ջակարտայի սկզբունքներից:** Այս պարագայում, կոռուպցիայի դեմ ինստիտուցիոնալ պայքարի արդյունավետությունը գտնվում է բարձր մակարդակի վրա, քանի որ **մարմնի անկախությունը** անհրաժեշտ է կերաշխավորվի **կայուն սահմանադրաիրավական հիմքով**, իսկ գործունեությունը կիրականացնվի՝ **իրավունքի գերակայության միջավայրում:**

2. **Մարդկային ռեսուրսների հանդեպ իրավասություն ունենալու և արդյունավետ կառավարում իրականացնելու սկզբունքները:** Հակակոռուպցիոն մարմնի ղեկավարը պետք է ընտրվի **Ազգային ժողովի կողմից՝ մրցույթի միջոցով:** **Վերջինս պետք է լիազորված լինի** ինքնուրույնաբար հանդես գալ, մշակել իր գործունեության ծրագիրը, ձեռնամուխ լինի դրա իրականացմանը, օրենքով սահմանված կարգով ձևավորել աշխատակազմ: **Ջակարտայի սկզբունքներին** համաձայն՝ մարմնի ղեկավարները նշանակվում են մի գործընթացի միջոցով, որն ապահովում է նրա **ապաքաղաքական դիրքորոշումը,**

անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեխղճությունն ու իրավասությունը, իսկ նրանց աշխատանքից հեռացումը իրականացվում է միայն իրավականորեն հաստատված ընթացակարգով, որը հավասարազոր է օրենքով պաշտպանված անկախ իրավասու մարմնի. ինչպես՝ **Գլխավոր դատավորի պաշտոնազրկման ընթացակարգին:** (Հայաստանի պարագայում՝ վճռաբեկ դատարանի նախագահը և նրա պաշտոնազրկման ընթացակարգը):

3. **Մասնագիտացված աշխատակազմ:** Հայաստանի ինստիտուցիոնալ մարմնի ղեկավար կազմը և աշխատակազմը պետք է ձևավորվի հստակ սահմանված չափորոշիչների վրա՝ հիմքում ունենալով անձի մասնագիտական փորձառությունը և արհեստավարժությունը, բարեխղճությունը (Բարեխղճությունը = հաշվետվողականություն և թափանցիկություն + էթիկա + կոմպետենցիա - կոռուպցիա):
4. **Հակակոռուպցիոն մարմնի ղեկավարների ու աշխատողների անձեռնմխելիությունը:** Սահմանադրությամբ պետք է երաշխավորվեն հակակոռուպցիոն մարմնի ղեկավարների ու աշխատողների անձեռնմխելիությունը: Ջակարտայի սկզբունքների համաձայն՝ հակակոռուպցիոն գործակալության ղեկավարները և աշխատողները պետք է անձեռնմխելի լինեն քաղաքացիական և քրեական գործերի հանդեպ իրենց լիազորությունների իրականացման շրջանում իրականացված գործողությունների համար: Հակակոռուպցիոն գործակալության ղեկավարները և աշխատակիցները պետք է պաշտպանված լինեն կեղծ քաղաքացիական և քրեական գործերից:
5. **Ֆինանսական ռեսուրսներ:** 2019-2022թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի, ինչպես նաև Հայաստանում հակակոռուպցիոն մարմնի ստեղծման նպատակով պետք է կատարվի **ֆինանսական հաշվարկներ** և դրա հիման վրա պետական բյուջեով նախատեսել տարեկան հատկացումներ՝ հաշվի առնելով պետական բյուջեի կարողությունները և թույլատրելիության սահմանները: Պետական բյուջեով նախատեսվելիք ֆինանսական միջոցները **համաչափորեն պետք է հատկացնել հակակոռուպցիոն երեք ուղղությունների զարգացման և դրանց ներքո նախատեսված գործողությունների իրականացման համար**, որոնք են՝ հակակոռուպցիոն կրթություն, կոռուպցիայի կանխարգելում, իրավապահ գործառնություններ:
6. **Հանրության հետ աշխատանք:** Պետք է մշակվի հակակոռուպցիոն մարմնի կողմից հանրության հետ **ռազմավարական հաղորդակցության պլաններ**, իսկ հանրության հետ աշխատանք տանել **ուղիղ ժողովրդավարական (այդ թվում էլեկտրոնային) գործիքների**

միջոցով, այդ թվում ուղիղ շփումների, տարբեր խորհրդածողովների, հանդիպումների, քննարկումների, մամուլի ասուլիսների, կրթական ծրագրերի և այլ միջոցառումների համատեղ կազմակերպում:

Ի հավելումն վերոգրյալի՝ արդյունավետ հակակոռուպցիոն պայքար իրականացնելու տեսանկյունից կարևորվում է նաև մասնագիտացված **հակակոռուպցիոն դատարանի և դատախազությունում միայն կոռուպցիոն հանցագործությունների մեջ մասնագիտացված ստորաբաժանման աշխատակազմի կարողությունների զարգացումը:**

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, այն դեպքում, եթե այս փուլում **կառավարությունը չցուցաբերի բավարար քաղաքական մեկ միասնական անկախ ունիվերսալ հակակոռուպցիոն մարմին ստեղծելու հարցում**, ապա՝ երկու առանձին հակակոռուպցիոն մարմիններ (օժտված՝ ա) կանխարգելիչ և հակակոռուպցիոն կրթության իրականացման գործառնություններով, բ) իրավապահ գործառնություններով) **ստեղծելու պարագայում պետք է հնավորինս ապահովվի վերը նշված ընդհանուր չափանիշները**, իսկ մարմինների ղեկավար կազմը ընտրվի **բացառապես մրցութային կարգով՝ համապատասխան մրցութային խորհուրդների միջոցով**, որով կապահովվի նրանց **ապաքաղաքական դիրքորոշումը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեխղճությունն ու իրավասությունը:** Երկու մարմինների ձևավորման և մրցութային խորհուրդների կազմի մասով մեր առաջարկությունները ներկայացված են հետագա շարադրանքում: Ի լրումն հիշյալի, այս դեպքում **Ռազմավարությամբ պետք է նաև ամրագրվի, որ կոնկրետ ժամկետներում կառավարությունը սույն ռազմավարության իրականացմանը զուգահեռ նախաձեռնելու է սահմանադրական բարեփոխումների իրականացման փուլ՝ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգին սահմանադրական երաշխաքիներով օժտելու նպատակով:**

II. Ռազմավարություն **18-րդ կետում** նշվում է հետևյալը. «Բացի այդ, ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 165-Ն որոշմամբ ստեղծված **Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը** որևէ էական արդյունք չարձանագրեց հակակոռուպցիոն քաղաքականության ամբողջական և արդյունավետ իրականացման և համակարգման, կոռուպցիայի առաջացման ու տարածման պատճառները վերացնելու տեսանկյունից՝ կրելով **ձևական բնույթ:** Այն ըստ էության, հընթացս անուղղակի փաստեց, որ դրա ստեղծումը կոռուպցիայի դեմ պայքարի **հռչակագրային բաղադրիչից անդին այլ գործնական նպատակ չի հետապնդում:**»:

Հարկ ենք համարում նշել, որ թեև Կոալիցիան և ԻՀԱ-ն վերապահումներ ունեն Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի գործունեության արդյունավետության առնչությամբ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է Ռազմավարությամբ արձանագրել, որ Հայաստանում վերջին տարիներին կոռուպցիայի դեմ պայքարն ինստիտուցիոնալ հենքի վրա դնելուն ուղղված մի շարք նախաձեռնությունների, **այդ թվում՝ հակակոռուպցիոն բնույթի օրենսդրական ակտերի մշակման աշխատանքների, սկիզբն ազդարարվել է հենց Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստերի ժամանակ տեղի ունեցած մասնագիտական քննարկումների արդյունքում** և դա արձանագրված փաստ է:

Այսպես, օրինակ 1. Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի 2016 թվականի հունիսի 15-ին և 17-ին կայացած նիստերում քննարկվող օրակարգային հարցերից է եղել **կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ նոր համակարգի, ապօրինի հարստացման քրեականացման վերաբերյալ ուսումնասիրությունների ներկայացումը**, որոնք կատարվել էին Կոալիցիայի և ԻՀԱ-ի կողմից: Ուսումնասիրությունների ներկայացումից հետո ՀՀ վարչապետի՝ Խորհրդի նախագահի կողմից ՀՀ արդարադատության նախարարին հանձնարարական է տրվել 2 ամսյա ժամկետում հասարակական կազմակերպությունների հետ մշակել օրենսդրական փաթեթ և ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ,⁷ ինչին էլ հաջորդել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունումը: Վերջինիս շրջանակներում քրեականացվեց ապօրինի հարստացումը:

Օրինակ 2. Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի 2017 թվականի հունվարի 21-ին կայացած նիստում քննարկվող օրակարգային հարցերից է եղել **կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրող անձանց (ազդարարների) իրավունքների պաշտպանության հարցի ներկայացումը**, ինչից հետո ՀՀ վարչապետի՝ Խորհրդի նախագահի կողմից հանձնարարվել է ՀՀ արդարադատության նախարարությանը հնարավորինս սեղմ ժամկետում ՀՀ կառավարություն ներկայացնել «Ազդարարների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծ:⁸

⁷ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի արձանագրությանը մանրամասն կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://www.gov.am/u_files/file/KORUPCIA%2015_06_16%20ev%2017_06_16.pdf

⁸ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի արձանագրությանը մանրամասն կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/KORUPCIA%2021_01_17.pdf

Այսինքն, վերը նշված փաստերը վկայում են այն իրողության մասին, որ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը ծառայել է որպես հակակոռուպցիոն հարցերի մասնագիտական քննարկումների հարթակ, որոնք տվել են իրենց շոշափելի արդյունքները: Այս տեսանկյունից տարակուսելի է այն հանգամանքը, որ Ռազմավարությունը իր մեջ պարունակում է խիստ հակասական և իրարամերժ սահմանումներ: Մասնավորապես, Ռազմավարության 21-րդ կետում նշվում է նախորդ ռազմավարության արդյունքների մասին և, որպես դրական քայլերի օրինակներ առանձնացվել են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների փաթեթը, որի արդյունքում քրեականացվել է ապօրինի հարստացումը և սահմանվել է քննչական ենթակայությունը, «Ազդարարման համակարգի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը և այլն: Մյուս կողմից համարժեք գնահատական չի տրվել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի գործունեությանը: Այսպիսով, *գտնում ենք, որ Ռազմավարության 18-րդ կետը ենթակա է խմբագրման և դրանում պատշաճ ձևով պետք է արձանագրել, որ կոռուպցիայի դեմ պայքարի համար էական նշանակություն ունեցող վերոնշյալ օրենքների փաթեթների մշակվել են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստերում տեղի ունեցած քննարկումների արդյունքներով, որոնք նախաձեռնվել են Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից:*

Ինչ վերաբերում է Հայաստանում հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ներդրման առումով Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի (ներկայումս՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ)) ունենալիք դերակատարմանը, ապա պետք է նշենք, որ Ռազմավարության «3.1 Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգ» բաժնում որևէ անդրադարձ չի կատարվել, *թե Խորհուրդն ի՞նչ կարգավիճակ է ունենալու և արդյո՞ք դրա գործառույթներն որևէ այլ մարմնի է փոխանցվելու, թե՛ ոչ:*

Միայն Ռազմավարության 75-րդ կետում խոսք է գնում *Կոռուպցիայի դեմ պայքարի կարգավիճակի վերաիմաստավորման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու մասին*, որպեսզի

ապահովվի ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության կատարելագործումը
և արդյունավետության բարձրացումը:

Վերոգրյալի համատեքստում հարկ ենք համարում անդրադարձ կատարել վերջերս
ձևավորված **Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմավորման
գործընթացին** և դրա նկատմամբ ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և ԻՀԱ-ի
ունեցած դիրքորոշումներին:

Այսպես, նախ նշենք, որ Կոալիցիան և ԻՀԱ-ն ուսումնասիրելով ՀՀ վարչապետի
աշխատակազմի կողմից 2019 թվականի մայիսի 27-ին էլեկտրոնային փոստով
ուղարկված **«Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը
և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական
կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու մասին» ՀՀ
վարչապետի որոշման նախագիծը** (այսուհետ՝ Նախագիծ) և հիշյալ որոշումը ընդունելու
հիմնավորումները, հայտնել են, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս ՀՀ
կառավարությունը, քաղաքացիական հասարակությունը և այլ շահագրգիռ կողմեր
ակտիվ քննարկում են Հայաստանում հակակոռուպցիոն անկախ մասնագիտացված
մարմնի ստեղծման անհրաժեշտությունը, ուստի անհրաժեշտ է դիտարկել **նոր
հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ չձևավորելու հնարավորությունն ու
հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականությունների մշակման լիազորությունը
վերապահել նոր ստեղծվելիք հակակոռուպցիոն անկախ մասնագիտացված մարմնին:**
Կոալիցիան և ԻՀԱ-ն, միայն վերոնշյալ առաջարկն չընդունելու պարագայում,
ներկայացրել և առաջարկել են դիտարկել իրենց մտահոգություններն ու
առաջարկությունները հիշյալ Նախագծի վերաբերյալ⁹:

Հավելենք, որ միջազգային փորձը ևս վկայում է, որ **կենտրոնացված հակակոռուպցիոն
ինստիտուցիոնալ համակարգ՝ ունեցող երկրներում հակակոռուպցիոն քաղաքականության
մշակման գործառույթը տրվում է ունիվերսալ մարմնին:** Նաև հիշեցնենք, որ ունիվերսալ
մարմնի՝ նման գործառույթ ունենալը համարվում է այդ մարմինների գործունեության
արդյունավետությունը բնորոշող առավելություններից մեկը:

Այնուհետև, 2019 թվականի հունիսի 24-ի ընդունվեց «Հակակոռուպցիոն
քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը,
խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և

⁹ «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի որոշման
նախագծի վերաբերյալ Կոալիցիայի և ԻՀԱ-ի կարծիքին և առաջարկություններին կարող էք ծանոթանալ
հետևյալ հղմամբ՝ <https://armla.am/43334.html>:

ռոտացիայի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի թիվ 300-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին սահմանված» վարչապետի թիվ 808-Ն որոշումը, որով առանց որևէ հիմնավորման, նվազեցվել է հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման հարցում ՔՀԿ-ների, տեղական ինքնակառավարման մարմինների և Հանրային խորհրդի դերը, քանի որ **Խորհրդի կազմից դուրս էին մնացել Հանրային խորհուրդը, Կոալիցիան, Հայաստանի Համայնքների Միությունը:**

Ավելին, հիշյալ որոշմամբ **չի նախատեսվել Խորհրդում ներգրավվելու նպատակով մրցույթի կազմակերպում Կոալիցիաների համար**, ինչի վերաբերյալ սույն թվականի հուլիսի 3-ին տեղի ունեցած Կոալիցիայի կառավարման խորհրդի արտահերթ նիստի արդյունքներով Կոալիցիայի կառավարման խորհուրդը հանդես է եկել հայտարարությամբ,¹⁰ նշելով, որ *որևէ կերպ հիմնավորված չի եղել Խորհրդի կազմից Կոալիցիային արհեստականորեն դուրս թողնելու մոտեցումը, ուստի Կոալիցիայի կառավարման խորհրդի անդամ կազմակերպությունները նպատակահարմար չեն գտնում ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի թիվ 808-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգերով մասնակցել Խորհրդին ՔՀԿ-ների անդամության համար կազմակերպվող մրցույթին: Չնայած այս որոշմանը, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան և դրա կառավարման խորհրդի անդամները, չանդամակցելով Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին, այսուհետ նույնպես կշարունակեն Կառավարությանը աջակցել հակակոռուպցիոն քաղաքականությունների մշակման և բարելավման հարցերում՝ նպատակ ունենալով ապահովել կոռուպցիայից զերծ, ներդաշնակ և երջանիկ հասարակության կառուցումը Հայաստանի Հանրապետությունում:*

Այնուհետև, ՀՀ արդարադատության նախարարությունն իր պաշտոնական www.moj.am կայքում Խորհրդի կազմում ՀԿ-ների ներգրավման մրցույթի մասնակցության հայտարարություն էր տարածել՝ վերջնաժամկետ սահմանելով մինչև հուլիսի 10-ը, որը իրավական ակտերի պահանջների խախտմամբ երկարաձգել է մեկ օրով: Նշենք նաև, որ մրցույթի կազմակերպման գործընթացը նույնպես պարունակել է խախտումներ:¹¹ Այնուհետև, սույն թվականի հուլիսի 12-ին տեղի է ունեցել Խորհրդի անդամիկ նիստը,

¹⁰ Կոալիցիայի կառավարման խորհրդի հայտարարությանը կարող էք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ <https://armia.am/44019.html>:

¹¹ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում ՀԿ-ների ներգրավման մրցույթում թույլ տված խախտումներին կարող էք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ <https://iravaban.net/233713.html>:

որին մասնակցել է *ՀԿ-ների 4 ներկայացուցիչներ*¹², սակայն, հակառակ ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի թիվ 808-Ն որոշման N 3 հավելվածի 17-րդ կետի պահանջի՝ ՀՀ արդարադատության նախարարությունը 1 օրվա ընթացքում չի ապահովել մրցույթի արդյունքների մասին տեղեկատվության հրապարակումն իր պաշտոնական կայքում: Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը արդեն իսկ ձևավորվել է իրավական ակտերի պահանջների խախտմամբ, ուստի, այս մասով անհրաժեշտ է խմբագրել Ռազմավարության 18-րդ կետը՝ նախատեսելով Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին ՀԿ-ներին անդամակցության նոր մրցույթի կազմակերպում՝ Վարչապետի որոշմամբ սահմանված կարգով, ինչպես նաև՝ նախատեսել Խորհրդում Կոալիցիաների անդամակցություն, և այդ նպատակով, անհրաժեշտության դեպքում, նաև՝ մրցույթի կազմակերպում վերջիններիս համար:

III. Ռազմավարության 61-63-րդ կետերով անդրադարձ է կատարվում հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմնի՝ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ստեղծման ուղղությամբ մինչ այսօր իրականացված քայլերին, ներառյալ, թե ինչ քայլեր են ձեռնարկվել Հանձնաժողովի կազմավորման, Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար մրցութային խորհրդի ձևավորման շուրջ, իսկ Ռազմավարության 64-րդ կետում նշվում է, որ Ռազմավարությամբ կարևորվում է *Հանձնաժողովի կազմավորման ուղղությամբ հրատապ քայլերի ձեռնարկումը, ինչպես նաև առաջարկվում է զգալիորեն ընդլայնել Հանձնաժողովի գործառույթները՝ առկա 5-ի փոխարեն դարձնելով 13:* Այդ առնչությամբ հարկ ենք համարում անդրադառնալ Ազգային ժողովի կողմից սույն թվականի հունիսի 25-ին առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի կողմից ներկայացված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենքի նախագիծ) մշակման և առաջին ընթերցմամբ ընդունելու գործընթացին, որը միանշանակ չի ընդունվել Հայաստանում հակակոռուպցիոն պայքարի իրականացման գործընթացում ընդգրկված հիմնական դերակատարների կողմից: Մասնավորապես,

¹² Խորհրդի նիստի արձանագրությանը կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/ardzanagrutyun-12_07_19.pdf?fbclid=IwAR38tBRs2ZIQNH2PqPqtIgoz3_VXrcQz6HkXEIZYfqFnMOCigLbndfKX3Q

Կռալիցիայի կառավարման խորհուրդը **հանդես է եկել հայտարարությամբ**¹³ և վերահաստատել իր դիրքորոշումն առ այն, որ՝

- **Մշակում.** Օրենքի նախագծի մշակման գործընթացում չի ապահովել հիմնարար և պարտադիր իրավական գործընթացներ և ընդունվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի մի շարք նորմերի կոպիտ խախտմամբ, մասնավորապես՝ Օրենքի նախագիծը չի ներկայացվել հանրային քննարկման և չի հրապարակվել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ **www.e-draft.am-ում:**
- **Բովանդակություն.** Օրենքի նախագծով փոփոխվում են Հանձնաժողովի անդամի և նախագահի պաշտոնում թեկնածուների առաջադրման մեխանիզմները, որոնք խիստ իշխանամետ են. նախ, դուրս է եկել Հանձնաժողովի ձևավորման նպատակով ստեղծված անկախ Մրցութային խորհրդի կողմից (այսուհետ՝ Մրցութային խորհուրդ) մրցութի անցկացման կարգը, որն ապահովում էր նաև քաղաքացիական հասարակության մասնակցությունը նշյալ գործընթացներին: Բացի այդ, առաջարկվող իրավակարգավորմամբ Հանձնաժողովի անդամի թեկնածուներից 5-ից 3-ին առաջադրում է իշխող ուժը՝ 1-ին Կառավարության կողմից և 2-ը՝ ԱԺ կառավարող խմբակցության կողմից: Ավելին, եթե ԱԺ ընդդիմադիր խմբակցությունները չկարողանան համախոհությամբ ներկայացնել թեկնածու, այդ անդամին ևս առաջադրում է իշխող ուժը՝ ի դեմս ԱԺ կառավարող խմբակցության: Ստացվում է, որ այս պարագայում Հանձնաժողովի 5 անդամներից 4-ին նշանակելու է իշխող ուժը: Անհրաժեշտ է ընդգծել, որ **այս մեխանիզմները ոտնահարում են նաև հակակոռուպցիոն անկախ մարմինների ձևավորման վերաբերյալ Ջակարտայի սկզբունքները, որոնց համաձայն՝ նման մարմնի ղեկավարները նշանակվում են մի գործընթացի միջոցով, որն ապահովում է նրա ապաքաղաքական դիրքորոշումը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեխղճությունն ու իրավասությունը:**
- **Հիմնավորում.** Օրենքի նախագիծը չի ենթարկվել փորձաքննության, և բացակայում են փաստաթղթի ընդունման պարտադիր պայման հանդիսացող կից հիմնավորումները՝ իրենց բոլոր բաղադրիչներով հանդերձ: Ի լրումն՝ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի և «Իմ քայլը» դաշինքի պատգամավոր Աննա Կարապետյանի կողմից հունիսի 25-ին Ազգային ժողովում Օրենքի

¹³ Տե՛ս հղում 11-ը:

նախագծով առաջարկվող փոփոխությունների անհրաժեշտությունը միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ), կողմից տրված հանձնարարականներով առաջնորդված լինելու հիմնավորումները չեն համապատասխանում իրականությանը:

Կոալիցիայի կառավարման խորհուրդը համապատասխան գրություններ է ներկայացրել ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանին, ինչպես նաև ԱԺ բոլոր խմբակցությունների ղեկավարներին և 7-րդ գումարման խորհրդարանական ընտրություններին մասնակցած մյուս քաղաքական ուժերի ղեկավարներին, միջազգային կառույցներին և **հորդորել է հետ կանչել Արարատ Միրզոյանի կողմից ներկայացված և առաջին ընթերցմամբ 25.06.2019թ. -ին ընդունված Օրենքի նախագիծը՝** հաշվի առնելով նաև այն հանգամանքը, Ռազմավարությունը և Միջոցառումների ծրագիրը գտնվում են հանրային քննարկման փուլում, և դեռևս վերջնական որոշում հակակոռուպցիոն մարմնի մոդելի որդեգրման վերաբերյալ ընդունված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ներկայումս Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի հանրային քննարկումների ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչները՝ ի դեմս նախարարի և փոխնախարարների, հայտնել են, որ Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի ընդունման շրջանակներում է քննարկվելու և վերջնական որոշում կայացվելու Հայաստանում հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մոդելի ընտրության, այդ թվում՝ դրանց կազմավորման վերաբերյալ, ինչը հնարավոր է դարձնում, որպեսզի ԱԺ-ի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված Օրենքի նախագիծն ամբողջությամբ վերանայվի, հետևաբար **առաջարկում ենք փոփոխության չկատարել Հանձնաժողովի անդամի և նախագահի պաշտոնում թեկնածուների առաջադրման մեխանիզմներում՝ թողնելով գործող մրցութային կարգը:** Միաժամանակ **առաջարկում ենք փոփոխություններ կատարել միայն Հանձնաժողովի մրցութային խորհրդի կազմում անդամներ նշանակող կառույցների ցանկում՝ նման լիազորություն տալով ստորև թվարկված մարմիններին.**

- 1) **Բարձրագույն դատական խորհուրդ՝** որպես դատական իշխանության ներկայացուցիչ,

- 2) Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցություններ՝ որպես օրենսդիր իշխանության ներկայացուցիչներ,
- 3) ՀՀ կառավարություն՝ ի դեմս սահմանադրական մարմին հանդիսացող Հանրային խորհրդի, որի 15 անդամները նշանակվել են վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ որպես գործադիր իշխանության ներկայացուցիչ,
- 4) Մարդու իրավունքների պաշտպան՝ որպես սահմանադրական կարգավիճակ ունեցող՝ մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը հետևող,
- 5) Փաստաբանների պալատ՝ որպես քաղաքացիական հասարակության մասնագիտական անկախ ինստիտուտ:

IV. Ռազմավարության 66-րդ կետում նշվում է, որ կոռուպցիայի դեմ պայքարում կայացած ինստիտուցիոնալ համակարգի երկրորդ կարևոր բաղադրատարրը **կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործառնությունը և անկախության երաշխիքներով օժտված, մասնագիտացված մարմնի առկայությունն** է, իսկ 68-րդ կետով առաջարկվում է ստեղծել **հակակոռուպցիոն մասնագիտացված մարմին՝ Հակակոռուպցիոն կոմիտե:** Այնուհետև, Ռազմավարության 70-72-րդ կետերով ընդհանուր անդրադարձ է կատարվել Հակակոռուպցիոն կոմիտեի կազմավորմանը, գործունեության արդյունավետության երաշխավորմանը, ֆինանսական ինքնուրույնությանը և հաշվետվողականությանը, սակայն հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Ռազմավարությանը և Միջոցառումների ծրագրին կից հանրային քննարկման չի ներկայացվել այդ մարմնի գործունեությունը կանոնակարգող օրենքի նախագիծ, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու, թե **արդյո՞ք** նոր հակակոռուպցիոն մարմինը ստեղծվելու է Ջակարտայի հայտարարության մեջ սեղ գտած հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքներին համահունչ, **արդյո՞ք** այդ մարմնի անկախության երաշխիքներ տրվելու են Սահմանադրությամբ ինքնավար մարմնի կարգավիճակին ներկայացվող պահանջներին համահունչ, **թե՞** այն ստեղծվելու է որպես քննչական մարմին՝ Սահմանադրության 178-րդ հոդվածին համապատասխան: Թերևս վերջինիս պարագայում կասկածի տակ է դրվում նոր ձևավորվող մարմնի՝ միջազգային փաստաթղթերով հակակոռուպցիոն գործակալությունների անկախությանը ներկայացվող պահանջների ողջ ծավալով ապահովումը՝ հաշվի առնելով, որ **որպես քննչական մարմին ձևավորվելու պարագայում**:

- այդ մարմնի անկախության շրջանակներն ուրվագծվելու են միմիայն օրենքի մակարդակում, հետևաբար, այս պարագայում, անկախ սահմանադրական մարմինների ձևավորմանը ներկայացվող սահմանադրաիրավական կարգավորումները վերաբերելի չեն,
- այդ մարմնի գործունեությունը կարգավորող օրենքը, այդ թվում հակակոռուպցիոն կոմիտեի անկախության շրջանակները, կարող են փոփոխվել ցանկացած ժամանակ, այդ թվում նաև՝ քաղաքական կամքի փոփոխման արդյունքում և պահի հրամայականով, քանի որ ունենում ենք հակակոռուպցիոն մարմնի անկախության շրջանակները նեղացնելու առավել պարզեցված և հեշտ ընթացակարգ:

Վերոնշյալից բացի՝ հարկ է ուշադրություն դարձնել Ռազմավարության 70-րդ կետի կարգավորումներին, որոնց համաձայն. «ի տարբերություն ՀՀ-ում գործող այլ քննչական մարմինների, Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի թեկնածուներն ընտրվելու են մրցութային խորհրդի կողմից՝ բաց մրցույթի արդյունքում: Հավասարակշռված ներկայացուցչություն ապահովելու նպատակով՝ մրցութային խորհուրդը կազմված է լինելու Ազգային ժողովի (կառավարող և ընդդիմադիր խմբակցություններ), Կառավարության և Բարձրագույն դատական խորհրդի առաջադրած անդամներից: Միաժամանակ մրցութային խորհրդի նիստերը լինելու են բաց զանգվածային լրատվության միջոցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար և տեսաձայնագրվելու են: Մրցութային խորհրդի կողմից ներկայացված՝ մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված թեկնածուն նշանակվելու է վարչապետի կողմից:» Այսինքն, ստացվում է այնպես, որ *և՛ Հանձնաժողովի, և՛ Հակակոռուպցիոն կոմիտեի պարագայում հնարավոր է ունենանք* (կիրառվում է «հնարավոր է» եզրույթը, քանի որ ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի կողմից ներկայացված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը դեռևս ընդունվել է միայն առաջին ընթերցմամբ) *այդ մարմինների կազմավորման երկու տարբեր մոտեցումներ*, մասնավորապես՝ Հանձնաժողովի դեպքում անդամների նշանակում առանց մրցույթի, Կոմիտեի դեպքում ղեկավարի նշանակում՝ մրցույթի հիման վրա: Հետևաբար պարզ չէ, որ եթե Հանձնաժողովի պարագայում ներկայումս օրենքում ամրագրված են կարգավորումներ (խոսքը, հատկապես, վերաբերվում է մրցութային խորհրդի առկայությանը, որով ապահովվում է Հանձնաժողովի անդամների նշանակման մրցութային կարգը), որոնք ներկա փուլում կարող են **ինչ-որ առումներով** երաշխավորել

անկախություն, *ասյա ինչո՞ւ է Ազգային ժողովի նախագահի կողմից փորձ արվում հանել Հանձնաժողովի անդամների նշանակման միջոցային կարգը, սակայն մյուս կողմից, Ռազմավարությամբ նախատեսվում է Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի նշանակում հենց մրցույթի հիման վրա*: Հետևապես, ևս մեկ անգամ պնդում ենք, որ Հանձնաժողովի անդամները պետք է նշանակվեն մրցույթային կարգով:

Ինչ վերաբերում է Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի նշանակման կարգին, **առաջարկում ենք**, ինչպես Հանձնաժողովի ղեկավար, այստեղ նույնպես մրցույթային խորհրդում ապահովել ոչ միայն իշխանության երեք ճյուղերի մասնակցությունը, այլև՝ Մարդու իրավունքների պաշտպանին, Փաստաբանների պալատին: Իսկ գործադիր իշխանությանը մրցույթային խորհրդում ներկայացնի Հանրային խորհուրդը, որը համարվում է սահմանադրական մարմին և նրա 15 անդամները նշանակվել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից: Այս մոտեցումը հնարավորություն կտա որդեգրել միասնական և համակարգված մոտեցում հակակոռուպցիոն մարմինների ղեկավարների նշանակման հարցում և ունենալ միասնական քաղաքականություն, ինչպես նաև՝ ապահովել մասնակցային գործընթաց:

V. Ռազմավարության 52-րդ կետի համաձայն. «Հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական նպատակը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում **ՀՀ Կառավարության հռչակած հայեցակարգային կանխադրույթների ու սկզբունքների հետևողական կենսագործումն է բոլոր անհրաժեշտ ուղղություններով**»: Այդ առնչությամբ, հաշվի առնելով Հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերյալ 2013 թվականի Կուալա Լումպուրի հայտարարությունը և դրանում տեղ գտած սկզբունքները, մասնավորապես այն, որ **հիմնարար նպատակները և հիմնավորումները միջամտությունների համար պետք է սահմանվեն ազգային առաջնահերթությունների հիման վրա, ինչպես նաև բացերն ու կարիքները պետք է նախանշվեն**, գտնում ենք, որ.

- *Ռազմավարության նպատակի նման ձևակերպումը թերի է և ամբողջապես չի արտահայտում Հայաստանի հակակոռուպցիոն քաղաքականության հեռանկարը*: Անհրաժեշտ է ամրագրել, որ Ռազմավարությունը նպատակ է հետապնդում *նպաստելու կոռուպցիայից զերծ, ներդաշնակ և երջանիկ հասարակություն կառուցելուն, այդ թվում՝ հասարակության շրջանում կոռուպցիայի՝ որպես հասարակության սպառնալիքի ընկալման ձևավորմանն ու արմատավորմանը, կոռուպցիայի նկատմամբ հասարակության քամահրանքի, անհանդուրժողականության*

ընկալման, ազնիվ կառավարման պահանջարկի ձևավորմանն ու հասարակության իրազեկության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև պետական կառավարման մարմինների նկատմամբ քաղաքացիների բարձր վստահությունն օգտագործելու՝ որպես կոռուպցիայի նկատմամբ զրոյական հանդուրժողականության սկզբունքի խթանման միջոց:

*Ռազմավարության նպատակը չպետք է կապել միայն ՀՀ կառավարության ծրագրով հռչակած հայեցակարգային կանխադրույթների ու սկզբունքների հետևողական կենսագործման հետ, քանի որ կառավարությունները փոփոխական են, ինչի հետևանքով փոփոխվում են նաև նրանց գործունեության առաջնահերթությունները, ուստի նման դեպքերում Ռազմավարության և Միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների իրականացումը որևէ կերպ չպետք է առկախվի, ավելին՝ պետք է անխափան շարունակվի դրանց կենսագործման գործընթացը: Ի լրումն նշենք, որ նման իրավիճակ արդեն ունեցել ենք, երբ 2018 թվականի գարնանը տեղի ունեցած հեղափոխությունից հետո, պետական մարմինները պատշաճ մակարդակով չիրականացրեցին նախորդ՝ 2015-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունները՝ դրա հիմնական պատճառ համարելով երկրում տեղի ունեցած հեղափոխությունն ու անցումային շրջանին բնորոշ գործընթացները: Հետևապես, **առաջարկում ենք** խմբագրել վերը նշված շարադրանքը այն տրամաբանությամբ, որ Հակակոռուպցիոն ռազմավարությունը հաշվի առնի և կապեր հաստատի այլ համապատասխան պետական ծրագրերի (օր.՝ դատական ոլորտի, մարդու իրավունքների պաշտպանության, հանրային կառավարման բարեփոխումներ, բաց կառավարություն և այլն), այդ թվում Կառավարության ծրագրի հետ, սակայն այն պետք է ունենա իր նպատակները, խնդիրներն ու առաջնահերթությունները:*

Ռազմավարության նախագծում ներառվող նպատակների և խնդիրների հստակ ձևակերպման համար օգտակար կարող է լինել հենց ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի բուն նպատակները, որոնք տեղ են գտել առաջին հոդվածում: Դրանք են.

- ա) կոռուպցիան կանխարգելելուն և դրա դեմ ավելի արդյունավետ և ներգործուն պայքարելուն ուղղված միջոցների խրախուսումը և ուժեղացումը.
- բ) կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարում, այդ թվում՝ արժեքների վերադարձման ուղղությամբ միջազգային համագործակցության և տեխնիկական օգնության խրախուսումը, դյուրացումը և օժանդակումը.

գ) պետական գործերի և պետական սեփականության ազնիվ, պատասխանատու
և պատշաճ կառավարման խրախուսումը:

2. Առաջարկություններ Միջոցառումների ծրագրի վերաբերյալ

I. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում» (Միջոցառում 1):

Միջոցառման «Ակնկալվող արդյունքը» սյունակում 2019 թվականի համար նախատեսված է, որ Հանձնաժողովը կկազմավորվի: Այդ առնչությամբ անդրադառնալով Ազգային ժողովի կողմից սույն թվականի հունիսի 25-ին առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի կողմից ներկայացված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման և առաջին ընթերցմամբ ընդունելու գործընթացին և դրա առնչությամբ Կոալիցիայի ու ԻՀԱ-ի ունեցած դիրքորոշումներին, գտնում ենք, որ **Օրենքի նախագիծն անհրաժեշտ է հետ կանչել և Հանձնաժողովի անդամների ընտրությունը կազմակերպել գործող օրենսդրական կարգավորումների շրջանակներում, հաշվի առնելով, որ այդ կարգավորումները համահունչ են նաև Ջակարտայի սկզբունքներին:** Միաժամանակ, հաշվի առնելով ներկայիս հայաստանյան համատեքստը, առաջարկում ենք վերանայել մրցութային խորհրդի կազմը և այն ձևավորել հետևյալ կերպ՝ ապահովելով իշխանության երեք ճյուղերի, քաղաքացիական հասարակության և մարդու իրավունքների պաշտպանություն իրականացնող անկախ մարմինների ներգրավումը՝

- 1) **Բարձրագույն դատական խորհուրդ՝** որպես դատական իշխանության ներկայացուցիչ,
- 2) **Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցություններ՝** որպես օրենսդիր իշխանության ներկայացուցիչներ,
- 3) **ՀՀ կառավարություն՝** ի դեմս սահմանադրական մարմին հանդիսացող Հանրային խորհրդի, որի 15 անդամները նշանակվել են վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ որպես գործադիր իշխանության ներկայացուցիչ,
- 4) **Մարդու իրավունքների պաշտպան կամ պաշտպանի աշխատակազմ՝** որպես սահմանադրական կարգավիճակ ունեցող՝ մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը հետևող,
- 5) **Փաստաբանների պալատ՝** որպես քաղաքացիական հասարակության անկախ ինստիտուտ:

Հարկ է նշել նաև, որ միջոցառման «Վերստուգիչ ցուցանիշը» բաժնում նախատեսված է, որ «ՀՀ պետական բյուջեով նախատեսվում է առանձին տող՝ հատկացված Հանձնաժողովի

Ֆինանսավորմանը:, մինչդեռ «Ֆինանսավորման աղբյուրը» նախատեսված է միայն «Օրենսդրությամբ չարգելված ֆինանսավորման աղբյուրներ»:

II. **«Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառնություններով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի ձևավորում» (Միջոցառում 2):**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս դեռ շարունակվում է Հայաստանում հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ներդրման շուրջ հանրային քննարկումները և առնվազն այս պահի դրությամբ առկա չէ Կառավարության վերջնական քաղաքական դիրքորոշումը, այնուամենայնիվ, եթե նախապատվություն տրվի Հայաստանում հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի առանձնացված մոդելին և ստեղծվի առանձին հակակոռուպցիոն իրավապահ մարմին, ապա, ինչպես Հանձնաժողովի պարագայում է նախատեսվում ՀՀ պետական բյուջեի առանձին տողով ֆինանսավորում հատկացնել, հետևապես **հակակոռուպցիոն իրավապահ մարմնի (Միջոցառում 2) և հակակոռուպցիոն մասնագիտական դասարանների (Միջոցառում 3)** բնականոն գործունեության ապահովման համար միջոցառման «Ֆինանսավորման աղբյուրը» բաժնում ևս համանման լրացում կատարելու անհրաժեշտություն կա:

Հիշեցնենք, որ Կուալա Լումպուրի հայտարարության մեջ, որպես կարևորագույն սկզբունք, նշված է, որ հակակոռուպցիոն ռազմավարությունները պետք է ունենան **ինստիտուցիոնալ և ֆինանսական կայունություն**, իսկ ՏՀԶԿ գեկույցի 1-ին առաջարկության 6-րդ կետում նշվում է, որ **հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումները պետք է ուղեկցվեն իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորմամբ:**

Բացի այդ, անդրադառնալով Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի նշանակման կարգին, առաջարկում ենք, ինչպես Հանձնաժողովի դեպքում, այստեղ նույնպես մրցութային խորհրդում պետք է ապահովել ոչ միայն իշխանության երեք ճյուղերի մասնակցությունը, այլև՝ Մարդու իրավունքների պաշտպանին, Փաստաբանների պալատին: Իսկ գործադիր իշխանությանը մրցութային խորհրդում ներկայացնի Հանրային խորհուրդը, որը համարվում է սահմանադրական մարմին և նրա 15 անդամները նշանակվել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից: Այս մոտեցումը հնարավորություն կտա որդեգրել միասնական և համակարգային մոտեցում՝

հակակոռուպցիոն մարմինների ղեկավարների նշանակման հարցում և ունենալ միասնական քաղաքականություն, ինչպես նաև՝ ապահովել մասնակցային գործընթաց:

III. **Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում (Միջոցառում 5):¹⁴**

Հաշվի առնելով ՔՀԿ-ների ակտիվ ներգրավվածությունը Հայաստանում հակակոռուպցիոն պայքարի իրականացման գործընթացում՝ *ԻՀԱ-ն և Կոալիցիան նրական են գնահատում հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացմանը միտված միջոցառման նախատեսումը:*

Այնուամենայնիվ, կարևորելով քաղաքացիական հասարակության կառույցների ունեցած դերակատարումը **հատկապես հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի իրականացման գործընթացում**, ԻՀԱ-ն և Կոալիցիան իր նախորդ առաջարկություններում առաջարկել էր դիտարկել *Ռազմավարության մոնիթորինգի իրականացումը հակակոռուպցիոն ոլորտում մասնագիտացված գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններին պատվիրակելու նպատակահարմարության հարցը* և Միջոցառումների ծրագրով առանձին միջոցառում նախատեսել, *այդ թվում՝ մոնիթորինգի իրականացնելու կարողությունների շարունակական զարգացման: Առաջարկում ենք նշված միջոցառումը նախատեսել Միջոցառումների ծրագրի «Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի զարգացում» բաժնում*, դրանով իսկ կարևորելով Հայաստանում հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ներդրման գործում ՔՀԿ-ների ունեցած դերակատարումը:

Հիշեցնենք, որ քաղաքացիական հասարակության ներգրավումը կոռուպցիայի դեմ պայքարում նախատեսված է՝ *ՄՄԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոալիցիայի առաջնահերթություններով՝ հակակոռուպցիոն վերապատրաստումների իրականացման եղանակով*, որպեսզի վերջիններս ձեռք բերեն կարողություններ ՄՄԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի վերանայման մեխանիզմներին մասնակցելու համար: Բացի այդ, *«Արևելյան գործընկերություն՝ 2020 թվականին՝ 20 արդյունք» փաստաթղթում* նշվում է, որ

¹⁴ Առանձին միջոցառումների հերթական համարակալման մեջ բաց է թողնված հերթական 4-րդ համամարակալմամբ միջոցառումը:

քաղաքացիական հասարակության ներգրավումը հակակոռուպցիոն պայքարի բանալին է:

IV. **15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերհանում, ծրագրերի մշակում և իրականացում (Միջոցառում 6):**

Առաջարկում ենք վերանայել այն մոտեցումը, որ հակակոռուպցիոն ծրագրերը ներդրվելու են միայն 15.000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում (այսուհետ՝ ՏԻՄ): Մասնավորապես, փոփոխել 15.000 և ավելի բնակչություն ունենալու թվային սահմանափակումն ու որպես հիմնական չափանիշ նախատեսել, որ խոշոր չափի բյուջեներ ունեցող ՏԻՄ-երում ներդրվեն հակակոռուպցիոն ծրագրեր:

Բացի այդ, 2019 թվականի հունվարի 31-ին ԻՀԱ-ի և Կոալիցիայի կողմից ներկայացված կարծիք-դիրքորոշում և առաջարկություններում Նախագծի համանուն միջոցառման վերաբերյալ մտահոգություն էր հայտնել առ այն, որ եթե համապետական մակարդակում իրականացվող *հակակոռուպցիոն ռազմավարությունը ֆինանսավորվելու է հիմնականում պետական բյուջեի միջոցների հաշվին*, ապա Նախագծից պարզ չի դառնում, *թե համայնքներում հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերը արդյո՞ք ֆինանսավորվելու են պետական բյուջեից, թե՞ համայնքային բյուջեներից*: Եթե այդ ծրագրերի իրականացումը պետական ֆինանսավորմամբ է իրականացվելու, ապա Նախագծով հստակ պետք է նշվի դրա մասին, ինչպես նաև *Նախագծով պետական ծախսերի վրա ազդեցության նախնական գնահատականներ տրվի՝* համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի նիստում հավանության արժանացած «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգին հավանություն տալու մասին» N 42 արձանագրային որոշման (այսուհետ՝ Մեթոդական հրահանգ) պահանջների: Վերոնշյալ առաջարկությանն ի պատասխան ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված ամփոփաթերթում նշվել է, որ **«Նշված միջոցառման ֆինանսավորման վերաբերյալ վերջնական որոշման կայացման պարագայում նախագծում կկատարվի համապատասխան նշում»**: Այդ առնչությամբ, նախ հաշվի առնելով այն, որ հանրային քննարկման է ներկայացված արդեն Նախագծի լրամշակված տարբերակը, որի վերջնական տարբերակը Կառավարության հաստատմանը պետք է ներկայացվի սույն թվականի օգոստոսի վերջին տասնօրյակում, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ

միջոցառման ֆինանսավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները պետական բյուջեից հատկացնելու պարագայում դրանք պետք է արտացոլված լինեն ինչպես **Հայաստանի Հանրապետության 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում, այնպես էլ 2020 թվականի պետական բյուջեում,** ապա անհրաժեշտություն է առաջանում նախքան Կառավարության կողմից Նախագծի ընդունումը, ունենալ **պետական ծախսերի վրա ազդեցության նախնական գնահատականներ:** Նշենք նաև, որ հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերյալ Կուալա Լումպուրի հայտարարության համաձայն՝ **հակակոռուպցիոն ռազմավարությունները պետք է ունենան ինստիտուցիոնալ և ֆինանսական կայունություն, ինչպես նաև հաշվի պետք է առնվեն իրականացման կարողությունները:**

Ինչ վերաբերում է նշված միջոցառման վերաբերյալ կոալիցիայի կողմից հնչեցված այն հարցադրմանը, թե ինչպիսի՞ կառույցներ են ներգրավված լինելու համայնքներում կոռուպցիոն ռիսկերի վերահսման, ծրագրերի մշակման, մոնիթորինգի իրականացման գործընթացներում, քանի որ համայնքների կարողությունները՝ այդպիսի ծրագրեր մշակելու, իրականացնելու և արդյունավետությունը երաշխավորելու հարցերում խիստ սահմանափակ են, այդ առնչությամբ հայտնում ենք, որ **թեև վերանայվել է միջոցառման իրականացման պատասխանատու մարմինների ցանկը՝ ներառելով նաև հակակոռուպցիոն ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների (համաձայնությամբ), այնուամենայնիվ, գտնում ենք, որ ինչպես Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի, այնպես էլ թիրախային հանդիսացող տեղական ինքնակառավարման մարմիններում հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի մոնիթորինգը պետք է պատվիրակվի հակակոռուպցիոն ոլորտում մասնագիտացված գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններին:**

Բացի այդ, **առաջարկում ենք** նաև փոփոխության ենթարկել նաև նշված միջոցառման ուղղությամբ առաջիկա տարիների իրականացվելիք գործողությունների ժամանակացույցը՝ հաշվի առնելով, որ եթե Ռազմավարությունը և Միջոցառումների ծրագիրը կառավարության կողմից հաստատվի 2019 թվականի վերջին եռամսյակում, ապա ընթացիկ տարվա համար նախատեսված գործողությունների իրականացումը իրատեսական չի կարող համարվել:

V. **Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա պետական մարմիններում հակակոռուպցիոն, այդ թվում՝ ներքին բարեվարքության գործողությունների ծրագրերի մշակում և իրականացում (Միջոցառում 7):**

Միջոցառումը նախատեսվում է 2019 թվականի ընթացքում մշակել պետական կառավարման համակարգի մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու մեթոդաբանություն և դրա հիման վրա պետական կառավարման համակարգի բոլոր մարմիններում իրականացվել են ռիսկերի գնահատումներ: Այդ առնչությամբ, ինչպես նախորդ՝ Միջոցառում 6-ի դեպքում, այնպես էլ այս պարագայում իրատեսական չենք համարում պետական կառավարման համակարգի բոլոր մարմիններում ընթացիկ տարում ռիսկերի գնահատման իրականացումը և առաջարկում ենք վերանայել ժամկետները:

Նաև պարզ չէ, թե արդյո՞ք պետական կառավարման համակարգի բոլոր մարմիններում համապատասխան գիտելիքներ և կարողություններ ունեն, որպեսզի ճիշտ գնահատում իրականացվի և ռիսկերը վեր հանվեն, և թե **ու՞րքե՞ր են գնահատելու** բարեվարքության գործողությունների ծրագրերի իրականացման **արդյունավետությունը**:

Բացի այդ՝ վերոնշյալ միջոցառման իրականացման պատասխանատու մարմինների ցանկում բացակայում է Հանձնաժողովը, մինչդեռ Ռազմավարության 65-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նախատեսվում է ***Հանձնաժողովին վերապահել նաև հակակոռուպցիոն միջոցառումների ու ծրագրերի կատարման նկատմամբ մոնիթորինգի իրականացման գործառույթը***: Վերոգրյալի հիման վրա, **առաջարկում ենք** սույն կետում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

VI. **«Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորում և գործարկում (Միջոցառում 9):**

ԻՀԱ-ն և Կոալիցիան իր կողմից ներկայացված կարծիք-դիրքորոշում և առաջարկություններում Նախագծի համանուն միջոցառման վերաբերյալ առաջարկել էին հանել վերոնշյալ միջոցառումը՝ անընդունելի համարելով օրենքներով ***(2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-206-Ն օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության համար ստեղծվելու են էթիկայի առանձին հանձնաժողովներ)***, այլ իրավական ակտերով կամ ՀՀ կառավարության

կողմից հավանության արժանացած ռազմավարական փաստաթղթերով արդեն իսկ նախատեսված միջոցառումների ներառումը Նախագծում: Ի պատասխան, ՀՀ արդարադատության նախարարությունն իր կողմից ներկայացված ամփոփաթերթում հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «Էթիկայի հանձնաժողովի անդամների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների շուտափույթ նշանակումը կարևորագույն նշանակություն ունի հանրային ծառայողների բարեվարքության կանոնների պատշաճ պահպանման համար: Ուստի, Միջոցառումների ծրագրով նախատեսված է համապատասխան էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների ձևավորումը 2019 թվականին, ինչը միտված է տվյալ ինստիտուտների արագ ներդրումն ապահովելուն:»:

Վերոգրյալի առնչությամբ գտնում ենք, որ ՀՀ արդարադատության նախարարությունը բավարար հիմնավորումներ չի ներկայացրել, ***թե՛ ինչու հատկապես նշված միջոցառումը պետք է տեղ գտնի Նախագծում և լրացուցիչ ծանրաբեռնի այն, եթե օրենքի պահանջի համաձայն այդ ուղղությամբ արդեն իսկ աշխատանքներ իրականացվում են:*** Այսինքն այս գործողությունը արդեն իսկ նախատեսված է օրենքով, և դրա վերաբերյալ ռազմավարական դրույթներ նախատեսելը անհրաժեշտություն չէ:

Հարկ ենք համարում նշել նաև, որ ***ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը համայնքային ծառայության մասով չի հանդիսանում լիազոր մարմին՝*** հետևաբար այդ մասով չի կարող որպես միջոցառման իրականացման համար պատասխանատու մարմին համարվել: Իսկ ինչ վերաբերում է Հանձնաժողովին՝ որպես միջոցառման իրականացման համար պատասխանատու մարմին նախատեսելուն, ապա պետք է նշենք, որ թեև Ռազմավարության 65-րդ կետի 9-րդ ենթակետով նախատեսվում է ***Հանձնաժողովին վերապահել բարեվարքության հարցերով կազմակերպիչների աշխատանքների համակարգման գործառույթ, այնուամենայնիվ այս պահի դրությամբ Հանձնաժողովը որևէ լիազորություն չունի:***

VII. Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարելավում (Միջոցառում 10):

ՏՀԶԿ զեկույցի 9-րդ առաջարկության 1-ին կետով առաջարկվում է բարձրացնել քաղաքացիական ծառայության աշխատողների վարձատրության մրցունակությունը: Առաջարկվում է նաև **ընդհանուր վարձատրության չափի մեջ սահմանափակել պարգևավճարների տեսքով փոխհատուցումների տրամադրման ծավալը և ապահովվել,**

որպեսզի պարզևավճարներ տրամադրվեն միայն կատարողականների հիման վրա՝ հստակ և օբյեկտիվ չափանիշներով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք միջոցառման և՛ «Ակնկալվող արդյունքը» սյունակում, և՛ «Վերստուգիչ ցուցանիշը» սյունակում հատուկ անդրադարձ կատարել պարզևավճարների և հավելավճարների տրամադրման վերանայմանը՝ ուսումնասիրելով միջազգային համապատասխան փորձը և ներդնելով նոր համակարգ՝ հստակ և օբյեկտիվ չափանիշներով և գնահատման ճշգրիտ ցուցիչներով:

VIII. Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործում (Միջոցառում 13):

ԻՀԱ-ն և Կոալիցիան Նախագծի համանուն միջոցառումների (նախկինում 24, 56) վերաբերյալ իր կողմից ներկայացված կարծիք-դիրքորոշում և առաջարկություններում նշել էին, որ *Նախագծով ազդարարներին պաշտպանելու և խրախուսելու վերաբերյալ որևէ գործուն միջոցառում նախատեսված չէ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ ազդարարման համակարգի նկատմամբ հանրային վստահության բարձրացման և հանրային իրազեկման ուղղությամբ տարվող աշխատանքների վրա:* Այդ առնչությամբ հարկ ենք համարում նշել, որ Լրամշակված նախագծում ազդարարներին պաշտպանելու և խրախուսելու վերաբերյալ կրկին որևէ առանձին միջոցառում չի նախատեսվել, իսկ ՀՀ արդարադատության նախարարությունն դիրքորոշումը վերոնշյալ առաջարկության վերաբերյալ հետևյալն է. «Վերոգրյալից բխում է, որ միջոցառման շրջանակներում կիրականացվեն ազդարարման համակարգի առավել արդյունավետ գործունեությունն ապահովելուն ուղղված գործընթացներ, *իսկ առաջարկությամբ ներկայացվող կետերը կարող են ուսումնասիրվել համակարգի կատարելագործման վերաբերյալ միջոցառման կատարման շրջանակներում:*»

Հիշեցնենք, որ ազդարարների պաշտպանությունն ու խրախուսումը նախատեսված է *Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում և ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոալիցիայի առաջնահերթություններում:* Բացի այդ, առանձնահատուկ կարգավորումներ են նախատեսվում ԵԽԽՎ-ի Իրավական հարցերի և մարդու իրավունքների կոմիտեի զեկույցներում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ներկայացնում են ազդարարման համակարգի բարելավմանն ուղղված ԻՀԱ-ի և Կոալիցիայի **առաջարկությունները**, որոնք հետևյալն են.

- «Ազդարարների պաշտպանության և խրախուսման մեխանիզմների ներդրում»,

- ֆինանսական խրախուսում ազդարարման համար, ազդարարների անվտանգության ապահովում՝ լիազոր և իրավասու մարմին նախատեսելով միայն ՀՀ գլխավոր դատախազությանը՝ վերջինիս տրամադրելով ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակին մուտք գործելու բացառիկ իրավասություն,
- ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով անանուն կերպով ազդարարելու հնարավորություն այն ազդարարների համար, որոնց ներկայացրած հաղորդումները թեև հանցագործությունների վերաբերյալ չեն, սակայն իրենց բնույթով համապատասխանում են «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված արտաքին և ներքին ազդարարումներին,
- ազդարարների մասին ուղեցույցների պատրաստում և կիրառում,
- նախատեսել օրենսդրական կարգավորումներ ազգային անվտանգության համակարգում աշխատող անձանց կողմից կատարված հակաիրավական գործողությունների ազդարարման վերաբերյալ,
- նախատեսել ազդարարման միասնական հարթակից օգտվելու հնարավորություն այն անձանց համար, որոնք գտնվում են քրեակատարողական հիմնարկներում,
- միջոցներ ձեռնարկել մասնավոր, այդ թվում նաև բիզնես ոլորտում ազդարարման համակարգը ներդնելու ուղղությամբ,
- քաղաքացիական կազմակերպությունների կողմից վարվող էլեկտրոնային ազդարարման այլընտրանքային հարթակների ստեղծման հնարավորության նախատեսում օրենքի մակարդակով,
- արտահանման արգելքի նախատեսում այն երկրների ազդարարների համար, որտեղ ազդարարման իրավունքները պաշտպանված չեն:

IX. Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում (Միջոցառում 15):

Ի թիվս այլով, վերոնշյալ միջոցառումը Լրամշակված նախագծում ևս ընգրկվել է ԻՀԱ-ի և Կոալիցիայի առաջարկության հիման վրա: Ավելին, Ռազմավարության 65-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նախատեսվում է, որ ***իրավական ակտերի և դրանց նախագծերի հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման իրականացման գործառնությունը վերապահվելու է Հանձնաժողովին:*** Մինևույն ժամանակ ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված ամփոփաթեթում նշված է, որ ***նշված միջոցառման շրջանակներում կդիտարկվի նաև հակակոռուպցիոն***

փորձագետների ակրեդիտացման համակարգի ներդրման նպատակահարմարությունը:
Հաշվի առնելով վերոնշյալը, **առաջարկում ենք** սույն միջոցառման շրջանակներում՝ որպես ակնկալվող արդյունք, նախատեսել նաև հակակոռուպցիոն փորձագետների ակրեդիտացման համակարգի ներդրման նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրության կատարումը:

X. **Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում (Միջոցառում 16):**

Թեև նշված միջոցառումը որոշակի խմբագրման է ենթարկվել, իսկ ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված ամփոփաթեթերում նշվել է, որ ***Կոալիցիայի և ԻՀԱ-ի կողմից ներկայացված բոլոր առաջարկությունները կդիտարկվեն միջոցառման շրջանակներում նախատեսվող «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների իրականացման շրջանակներում***, սակայն հարկ ենք համարում անդրադառնալ միջոցառման «Վերստուգիչ ցուցանիշը» սյունակին, որում ներառված մի քանի ցուցանիշներ, ընտրողաբար, ընդգրկում են նաև Կոալիցիայի և ԻՀԱ-ի կողմից ներկայացված առաջարկությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը, այնուամենայնիվ, նպատակահար ենք գտնում մեկ անգամ ևս ներկայացնելու գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի բարելավման ուղղված Կոալիցիայի **առաջարկությունները**, որոնք հետևյալն են.

- վերանայել և ընդլայնել հայտարարատու պաշտոնատար անձանց ցանկը,
- վերանայել և ընդլայնել հայտարարատու պաշտոնատար անձանց հետ փոխկապակցված՝ հայտարարագրման պարտականություն ունեցող անձանց ցանկը,
- վերանայել հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար նախատեսված պատժամիջոցները,
- վերանայել հայտարարագրման առարկան, այդ թվում՝ հայտարարագրման առարկայում ներառել նաև ակտիվ չհանդիսացող ծախսերը, վերանայել թանկարժեք գույքի հայտարարագրման ֆինանսական շեմը,
- վերանայել հրապարակայնության ապահովման պահանջները, ներառյալ՝ նվիրատվությունների տրամադրման ժամանակ,
- վերանայել հայտարարագրերի վերլուծությամբ զբաղվող մարմնի լիազորությունները, այդ թվում՝ տրամադրելով ցանկացած քաղաքացուց ad hoc հայտարարագիր պահանջելու իրավասություն,

- վերանայել հայտարարագրերի հրապարակման կայքը՝ հնարավորություն ընձեռելով որոնումներ կատարել ըստ կոնկրետ ակտիվի և շահի:

XI. **Հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հստակեցում և դրանցում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիքակազմի ներդրում՝ այդ թվում՝ առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանում և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրում (Միջոցառում 18) և Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում (Միջոցառում 19):** Այս միջոցառումների կապակցությամբ առաջարկվում է՝

1. Որպես գործողության կատարման ակնկալվող արդյունք նախատեսել **«Բիզնեսում մասնավոր դետեկտիվների ինստիտուտի» ներդրումը՝** հաշվի առնելով, որ վերջինս փոխկապակցված է հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի հետ այնքանով, որ դրանց մի բաղադրիչը “Due Diligence”-ն է՝ երրորդ կողմերի, ներառյալ՝ բիզնես գործընկերների ռիսկի վրա հիմնված պատշաճ ուսումնասիրության կատարումը, որն իրականացվում է ֆոնային ստուգումների (background check) միջոցով՝ հաճախ այդ նպատակով ներգրավելով մասնավոր դետեկտիվներին: Բիզնես ոլորտում մասնավոր դետեկտիվներն էական աջակցություն են ցուցաբերում տնտեսվարող սուբյեկտներին նրանց պարտապանների և այլ գործընկերների հեղինակության և ֆինանսական վիճակը ուսումնասիրելու և իրենց վրա վերցված ֆինանսական պարտավորությունները իրականում կատարելու իրենց կարողությունը որոշելու հարցում: Վերոնշյալի շնորհիվ էական չափով կանխվում է ռիսկային գործարքների կնքումը և պարտապանների կողմից պարտքի վճարումից խուսափումը: Մասնավոր դետեկտիվը կարող է պարզել, արդյո՞ք ակտիվները ֆիկտիվ են, կատարվել են արդյո՞ք ոչ պատշաճ վճարումներ կամ արդյո՞ք առկա են այլ խեղաթյուրումներ կամ կեղծիքներ: Բացի այդ, մասնավոր դետեկտիվ գործունեության սուբյեկտները իրականացնում են ծավալուն աշխատանք մտավոր սեփականության իրավունքների խախտումների փաստերի բացահայտման, հատկապես՝ ապրանքային նշանների ապօրինի օգտագործման հարցում և այլն: Այս հարցի շուրջ միջազգային փորձի վերլուծությունից պարզ է դառնում, որ ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Կանադան, Հնդկաստանը, Իսրայելը, Ճապոնիան, Նորվեգիան, Իսպանիան, Իտալիան, Պորտուգալիան,

Մեքսիկան, Ռուսաստանը և աշխարհի շատ այլ երկրներում մասնավոր դետեկտիվների ինստիտուտը ճանաչված է պետական մակարդակով:

2. Որպես գործողության կատարման ակնկալվող արդյունք նախատեսել **«Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի ներդրման օրենսդրական պարտադիր պահանջի սահմանումը հանրային նշանակության կազմակերպությունների, ոչ հանրային նշանակության խոշոր ընկերությունների և պետության կամ համայնքի կողմից հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների համար»:**
3. Որպես գործողության կատարման ակնկալվող արդյունք նախատեսել **«Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի ներդրումը՝ որպես իրավաբանական անձանց պատասխանատվության բացառման/մեղմացման հիմքի նախատեսում»:** Ավելի մանրամասն տե՛ս Միջոցառում 42-ին վերաբերող առաջարկում:
4. Որպես գործողության կատարման ակնկալվող արդյունք նախատեսել **«Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի ներդրումը՝ որպես պետական գնումներում հավասար պայմանների դեպքում մասնակիցներին նախապատվություն տալու հիմք»:**

XII. Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրում (Միջոցառում 42): Այս միջոցառման կապակցությամբ առաջարկվում է՝

1. Որպես գործողության կատարման ակնկալվող արդյունք նախատեսել **«Իրավաբանական անձանց համար նախատեսված պատասխանատվության տեսակի որոշման հարցը»:** ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 26-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. **«Մասնակից պետության իրավական սկզբունքների պահպանման պայմանով՝ իրավաբանական անձանց պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիաիրավական կամ վարչական»:** Ինչպես տեսնում ենք, կոնվենցիայով առաջադրված չէ միայն քրեական պատասխանատվություն նախատեսելու պահանջ: Այս ինստիտուտը ամրագրված է մի շարք պետությունների օրենսդրությունում՝ Ավստրիա, Անգլիա, Բելգիա, Դանիա, Հունգարիայում, Իսրայելում, Իռլանդիայում, Իսլանդիայում, Կանադայում, Չինաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում և այլուր: Սակայն, տարբեր երկրներ ունեն տարբեր

տեսակետներ իրավաբանական անձանց պատասխանատվության վերաբերյալ: Մասնավորապես, կորպորատիվ պատասխանատվության հիմքը տարբերվում է երկրից երկիր, և որոշ երկրներում նախատեսված է քրեական պատասխանատվություն, ինչպիսիք են օրինակ՝ ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան, Նիդերլանդները, իսկ որոշ երկրներում՝ վարչական՝ Գերմանիա, Իտալիա: Հարկ է նշել, որ տեսական գրականության մեջ նշվում է, որ **այն երկրները, որոնք ունենք առանձին վարչական դատարաններ և վարչական դատավարություն, ինչպես օրինակ Գերմանիայում է, ցանկալի է նախատեսել վարչական պատասխանատվություն, ոչ թե՛ քրեական, քանի որ վարչական դատավարությամբ արդեն իսկ նախատեսված են լծակներ իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու համար:** Այս կապակցությամբ միջոցառման անվանումը նախատեսել **«Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրում»,** իսկ որպես գործողության կատարման ակնկալվող արդյունք նախատեսել ոչ թե՛ **«Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** և **«Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը մշակվել են»,** այլ՝ **«Համապատասխան օրենքների նախագծերի մշակում»,** որովհետև հնարավոր է նախատեսվի այլ պատասխանատվության տեսակ, քան՝ քրեականը, որը կկարգավորվի այլ իրավանորմերով:

2. Որպես գործողության կատարման ակնկալվող արդյունք նախատեսել նաև **«Իրավաբանական անձանց համար նախատեսված պատժամիջոցների ընտրության հարցի որոշումը»:** ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 26-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է. **«յուրաքանչյուր Մասնակից պետություն, մասնավորապես, պետք է ապահովի սույն հոդվածին համապատասխան պատասխանատվության ենթարկվող իրավաբանական անձանց նկատմամբ արդյունավետ, համաչափ և զսպոյ ներգործություն ունեցող քրեական կամ ոչ քրեական պատժամիջոցների, ներառյալ դրամական պատժամիջոցների կիրառումը»:** Նոր քրեական օրենսգրքի նախագիծը, իր 131-րդ հոդվածի ներքո, նախատեսում էր իրավաբանական անձանց պատժի հետևյալ տեսակները՝ **«տուգանք, գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցում, հարկադիր լուծարում և Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելք»:** Նախագծով նախատեսված պատասխանատվության միջոցների ցանկը, ի

տարբերություն միջազգային փորձի, շատ սպառիչ էր: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1988թ. հանձնարարականով նախատեսված են մի շարք պատիժներ, և հիմնականում շեշտը դրված է կանխարգելիչ պատիժների վրա, ոչ թե՝ ընկերությունների տնտեսական ոչնչացման: Բացի այդ, անհրաժեշտ է պահպանել պատժի համաչափության սկզբունքը: Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ տեսնում ենք, որ առկա են այնպիսի այլընտրանքային պատիժներ, ինչպիսիք են՝ վարչական հսկողության ենթարկումը (Ալբանիա), դատական հսկողության ենթարկումը (Ֆրանսիա՝ մինչև 5 տարի ժամկետով) և այլն: Եթե իրավաբանական անձը կոռուպցիոն հանցագործության պատճառով է ենթարկվում իրավաբանական պատասխանատվության, ապա պատիժ է նախատեսվում նաև պետական գնումներին գործընթացին մասնակցության զրկումը:

3. **Որպես գործողության կատարման ակնկալվող արդյունք նախատեսել նաև «Իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառման/մեղմացման հարցի նախատեսումը»:** Այս կապակցությամբ անհրաժեշտ է կապ նախատեսել հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի ներդրմանն ուղղված միջոցառումների (18 և 19) և սույն միջոցառման միջև: Միջազգային պրակտիկայի ուսումնասիրումը վկայում է այն մասին, որ շատ երկրներում հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի առկայությունը հաշվի է առնվում իրավաբանական անձի պատասխանատվության հարցը որոշելու ժամանակ: Տարբեր երկրներ նախատեսել են իրավաբանական անձանց պատասխանատվությունից ազատելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու տարբեր մոտեցումներ. այսպես, որոշ երկրներում օրենքը նախատեսում է պատասխանատվությունից ամբողջական ազատում այն դեպքերում, երբ առկա է հակակոռուպցիոն համապատասխանության ծրագիր, և պատասխանատու աշխատակազմը կատարել է իր լիազորությունների սահմանում հնարավորը կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ, օրինակ՝ Հոլանդիայում, Իսպանիայում, Շվեյցարիայում և Ավստրալիայում: Որոշ երկրներում հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի առկայությունը կարող է հաշվի առնվել իրավաբանական անձի պատասխանատվության սահմանման ժամանակ, օրինակ՝ Լատվիայում, Մոնտենեգրոյում, Սերբիայում և Ուկրաինայում: Որոշ երկրներում հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի առկայությունը կարող է հաշվի առնվել իրավաբանական անձի պատասխանատվության սահմանման ժամանակ, սակայն

ապացուցման բեռը դրված է իրավաբանական անձի վրա առ այն, որ իրենց հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի առկա չեն թերություններ, օրինակ՝ ճապոնիայում ու Կորեայում: Հավելենք, որ Քրեական օրենսգրքի նախագծի 129-րդ հոդվածով սահմանված էր իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառում. *«Եթե նրա կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ և բավարար բոլոր միջոցները հանցանքի կատարումը կանխելու նպատակով, սակայն հանցագործությունը կանխելու իրական հնարավորությունը բացակայել է»:* Այսինքն, ՀՀ-ն նախատեսում էր որդեգրել պատասխանատվության բացառման սկզբունքը:

XIII. Նախագծի նախորդ տարբերակում նախատեսված է եղել **գործարար ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանում և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրում միջոցառումը (Միջոցառում 20)**, որը Նախագծի գործող լրամշակված տարբերակում անվանվել է **«Գնումների ոլորտի բարելավում» (Միջոցառում 20)**: Այս կապակցությամբ հարկ ենք համարում հայտնել հետևյալը՝

1. Միայն գնումների ոլորտը նախատեսելը խիստ սահմանափակող է, քանի որ գործարար ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կարող ենք հանդիպել շատ այլ ոլորտներում, ուստի առաջարկում ենք այս միջոցառումը անվանել **«Գործարար ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանում և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրում»**,

2. **«Գնումների ոլորտում կոռուպցիոն ռիսկերի վերհանումը և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրումը»** նախատեսել որպես վերջինիս գործողության կատարման ակնկալվող արդյունք, որի ներքո դիտարկել

- **«Հիմնական տեխնիկական բնութագրերի ստանդարտների մշակումը»:** Պետական գնումների ոլորտում մրցույթների ընթացակարգերի հրավերներում տեխնիկական բնութագրերը և այլ չափորոշիչները համապատասխանեցվում են կոնկրետ կազմակերպությունների համար՝ վերջիններիս հաղթանակն ապահովելու նպատակով, որի արդյունքում մշտապես նույն կազմակերպությունների հետ են կնքվում պայմանագրեր: Որպես խնդրի լուծում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ընդունվեց «Ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ՀՀ

Ֆինանսների նախարարությանը տրվեց ընտրանքային կարգով փորձաքննություն իրականացնելու իրավասություն՝ պատվիրատուների հաստատված գնման առարկաների բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջները մրցակցության ապահովման պահանջի պահպանման տեսանկյունից: Սակայն, հետագա ազդարարումները ցույց են տալիս, որ այս մեխանիզմն իրեն չարդարացրեց, քանի որ վերջինիս առկայության պարագայում էլ շարունակվում է տեխնիկական բնութագրերի կոնկրետ անձանց համար ձևավորման արատավոր պրակտիկան. Բիզպաշտպան կայքով ստացված ահազանգներ՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված անձեռոցիկի գնանշման հարցման (ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67), բժշկական պարագաների և ծախսվող նյութերի էլեկտրոնային աճուրդների (ՀՀՊՆՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/3, չափաբաժիններ 3-6), (ՀՀՊՆՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26, ՀՀՊՆՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/28 և ՀՀՊՆՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/30, չափաբաժին՝ 177), Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության կողմից հայտարարված գնանշման հարցման (ՀՀԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 19/4, ՀՀԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 19/6), Վանաձորի համայնքապետարանի կողմից հայտարարված գնանշման հարցման (ՀՀԼՍՎՔ ԳՀԱՇՁԲ-19/42), Երևանի քաղաքապետարանի կողմից խաղասարքերի կառուցման ու տեղադրման մրցույթների վերաբերյալ: Հարցի լուծմանն ուղղությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախատեսվում է ներդնել պատվիրատուի կողմից հաստատվող գնման հայտերի հրապարակային փորձաքննության համակարգ: Գտնում ենք, որ այդուհանդերձ հիմնական տեխնիկական բնութագրերի ստանդարտների մշակումը միայն կաջակցի նշյալ փորձաքննության համակարգի գործարկմանը:

- **«Գնումների բողոքարկման համակարգի վերանայումը»:** Միջազգային պրակտիկային հայտնի են մի շարք օրինակներ, երբ ընդհանրապես բացակայում է գնումների ոլորտում բողոքարկման հատուկ մարմին, և փոխարենը գնումների բողոքարկումն իրականացվում է դատարանների կողմից, օրինակ՝ Բուլղարիա, Ավստրիա, Միացյալ Թագավորություն (Գերագույն դատարան): Դիտարկել նման համակարգի անցման նպատակահարմարության հարցը:

3. Որպես գործողություն կատարման ակնկալվող արդյունք նախատեսել նաև *«Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի վերհանումը և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրումը»*, որի ներքո դիտարկել՝

- *«Պետական օժանդակության վերահսկման մասին» ՀՀ օրենքի ընդունումը*, որը միտված կլինի պետական օժանդակությունում նեպոտիզմի և պատրոնաժի նվազեցմանը:
- *«Տնտեսական մրցակցության պաշտպանությանը վերաբերելի օրենսդրության վերանայում»*, այդ թվում՝ վերափոխելով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գործառույթների շրջանակը, կազմավորման կարգը և նվազեցնելով հայեցողական լիազորությունները պատասխանատվությունների սահմանման գործում:
- *Հավատարմագրային կառավարման գործընթացում ծագող կոռուպցիոն ռիսկերի վերհանումը և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրումը*: Նշյալ խնդրի լուծումն անհրաժեշտ է, որպեսզի պայքարել բիզնեսի և քաղաքականության սերտաճման, մենաշնորհների և գերիշխող դիրքի դեմ: Այս խնդրին անդրադարձել է նաև ԵԽ Կոռուպցիայի դեմ պետությունների խումբը՝ ԳԲԿՈ-ն՝ առաջարկելով. *«համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ կանխելու համար առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնող պատգամավորների նկատմամբ կիրառվող և նրանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների շրջանցման հնարավորությունները»*: ԳԲԿՈ-ն այս հանձնարարականի կատարումը գնահատել է *«մասամբ կատարված»* և ցանկանում է ՀՀ-ի կողմից իրականացված միջոցները որոշ ժամանակ գործողության մեջ դնելուց հետո լրացուցիչ գնահատել իրավիճակը, քանի որ անհամատեղելիության կանոնների գործնականում կիրառումը եղել է հանձնարարականի հիմնական պատճառը:
- *«Շուկայում անկանոնությունները վերհանող համակարգչային ապահովման ծրագրերի (screens) ներդրումը և գործարկումը, որը կհանդիսանա մենաշնորհների, գերիշխող դիրքի և հակամրցակցային համաձայնությունների դեմ պայքարի գործիք*: Վերջինիս կիրառման իրավազորությունը միջազգային փորձում տրված է *տնտեսական մրցակցության պաշտպանության պետական*

հանձնաժողովներին՝ վերջինիս համար նախատեսելով անկախության երաշխիքներ:

Հարկ է հավելել, որ Կոալիցիան և ԻՀԱ-ն առաջարկել էին դեռևս Նախագծի նախորդ տարբերակում ներառել վերոնշյալ վերջին երկու գործողությունը, իսկ ՀՀ արդարադատության նախարարությունն ի պատասխան հայտնել էր հետևյալ դիրքորոշումն իր կողմից ներկայացված ամփոփաթերթում. *«Առաջարկներն ըստ էության ուղղված են կոնկրետ օրենսդրական փոփոխությունների, որոնք չեն կարող քննարկման առարկա լինել այս ծրագրի շրջանակներում»:* Գտնում ենք, որ այդ դիրքորոշումը հիմնավոր չէ և հակասում է հենց Ռազմավարությանը և պատշաճ ուշադրություն չի դարձվել առաջարկի բովանդակությանը հետևյալ պատճառաբանությամբ. Ռազմավարությունը, որպես առաջադրած խնդիր է դիտարկում, ի թիվս այլնի, *«տնտեսական գործունեության ազատության ու ազատ տնտեսական մրցակցության ապահովումը և երաշխավորումը»* (54-րդ կետի 4-րդ ենթակետ), մասնավոր հատվածում հակակոռուպցիոն կառուցակարգերի ներդրման տեսանկյունից կարևորվում է *«ազատ տնտեսական մրցակցության, տնտեսական գործունեության ազատության երաշխավորումը, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովումը»* (95-րդ կետ) և նախատեսվում է *«տնտեսական մրցակցության պաշտպանությանը վերաբերելի օրենսդրության վերանայում, այդ թվում՝ վերափոխելով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գործառնությունների շրջանակը, կազմավորման կարգը»* (96-րդ կետ): Ուստի, եթե Ռազմավարությամբ անդրադարձ է կատարվում ազատ տնտեսական մրցակցության պաշտպանությանը, ապա Միջոցառումների ծրագրում դրա լուծման ուղղությամբ անհրաժեշտ է նախատեսել առանձին միջոցառում/գործողություն:

4. Որպես գործողության կատարման ակնկալվող արդյունք նախատեսել նաև *«Գործարար շահերի պաշտպանի ինստիտուտի ձևավորումը»:* Վերջինս հանդես կգա բիզնեսի և պետության միջնորդ օղակ, որը կապահովի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում բիզնեսի շահերի ներկայացումն ու պաշտպանությունը, ներառյալ՝ կոռուպցիոն գործերով: Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ բիզնես օմբուդսմենի տարբեր մոդելներ առկա են մի շարք երկրներում, օրինակ՝ Ավստրալիա, Ուկրաինա, Վրաստան, Ղազախստան, Ռուսաստան, ԱՄՆ և այլն:

XIV. **Իրական սեփականատերերի գրանցամատյանի ներդրում (Միջոցառում 21):** Վերոնշյալ միջոցառման վերաբերյալ Կոալիցիան իր կարծիք-դիրքորոշում և առաջարկություններում ներկայացրել էր Հայաստանում իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրման և դրա արդյունավետ կիրարկման ուղղությամբ մի շարք առաջարկներ, ինչին ի պատասխան ՀՀ արդարադատության նախարարությունը ամփոփաթերթում նշել է. *«առաջարկությամբ վեր հանված հարցերը և համապատասխան առաջարկությունները կքննարկվեն Ծրագրի 21-րդ կետի կիրառման շրջանակներում»:* Այնուամենայնիվ, գտնում ենք, որ ներքոնշյալ առաջարկությունները շարունակում են արդիական լինել և պետք է ձևակերպվեն որպես գործողության կատարման ակնկալվող արդյունք.

1. ***Տեղեկատվության արժանահավատությունը ստուգելու նպատակով գրանցամատյանը վարող մարմնի համար լծակների սահմանումը:*** Այդպիսիք կարող են հանդիսանալ բանկային և հարկային գաղտնիքների հասանելիությունը:
2. ***Իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության մակարդակի որոշումը:*** Այս կապակցությամբ, հարկ է նշել, որ ի սկզբանե երկրները տարբեր մոտեցումներ էին որդեգրել տվյալների հասանելիության վերաբերյալ: Տարբերակվում է տվյալների հասանելիության երեք մակարդակ՝ միայն ռեգիստրը վարող մարմնին, միայն շահագրգիռ անձանց, թե ամբողջ հասարակությանը: Ի սկզբանե, ԵՄ Փողերի լվացման դեմ պայքարի 4-րդ հրահանգն այս հարցի լուծումը թողում էր պետությունների վրա, սակայն ԵՄ Փողերի լվացման դեմ պայքարի 5-րդ հրահանգը ենթադրում է հասանելիության առավել լայն մակարդակ: Այս հարցը լուծելիս անհրաժեշտ է նաև անդրադառնալ բաժնետիրական ընկերությունները կարգավորող օրենսդրական նորմերում փոփոխություններ կատարելուն:
3. ***Պարտականությունը չկատարելու համար սանկցիաների տեսակների որոշումը:*** ԵՄ հրահանգներով նախատեսվում է որպես սանկցիա կիրառել տուգանք՝ ընկերության տարեկան շրջանառության 10%-ի չափով: Այլ սանկցիաները ներառում են պետական գնումներին մասնակցելու արգելք, որոշակի գործունեությամբ զբաղվող արգելք և այլն:
4. ***Առևտրային իրավաբանական անձանց համար՝ իրենց իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով լծակների սահմանումը:*** Մեծ Բրիտանիայում, օրինակ, գործող սեփականատերերի կողմից նման լծակ է ծառայում սեփականատերերի կողմից իրենց բաժնեմասը վաճառելիս շահույթ/եկամուտ

գեներացնելու անհնարինությունը՝ մինչև իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը:

XV. Արդարադատության ոլորտում էլեկտրոնային կառավարման գործիքների ներդրում և գործարկում, իրազեկման աշխատանքների իրականացում (Միջոցառում 22):

Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակի ներդրում (Միջոցառում 23):

Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում (Միջոցառում 24):

Միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացում և նշված համակարգի հենքի վրա Mygov.am էլեկտրոնային հարթակի ներդրում (Միջոցառում 30):¹⁵

Տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծում (Միջոցառում 31):

Միջոցառման «Ակնկալվող արդյունքը» սյունակում՝ 2019 և 2020 թվականների համար նշվում է, որ պետք է ներդրվի և գործարկվի www.e-petition.am (էլեկտրոնային հանրագիր), e-justice.am (էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգ), e-court (դատարանների միասնական էլեկտրոնային համակարգ), www.e-banruptcy.am (սնանկության կառավարիչների էլեկտրոնային հարթակ) էլեկտրոնային կառավարման գործիքները:

Հարկ ենք համարում նշել, որ ԻՀԱ-ն և Կոալիցիան նախորդ անգամ իր կարծիք-դիրքորոշում և առաջարկությունների մեջ արդեն իսկ ներկայացրել է, որ վերոնշյալ էլեկտրոնային գործիքների ներդրումը նախատեսված է մի շարք ռազմավարական փաստաթղթերով և միջոցառումների ծրագրերով, ինչը ենթադրում է, որ, *պետությունն այդ էլեկտրոնային գործիքները ներդնելու հանձնառություն արդեն իսկ ստանձնել է, հետևաբար Լրամշակված նախագծում ոչ միայն դրանց առանձին-առանձին կամ միասնական սահմանման անհրաժեշտություն չկար, այլև պետք էր բացառել անհիմն կրկնություններն ու փաստաթղթի լրացուցիչ ծանրաբեռնումը:* Փաստացի, ՀՀ արդարադատության նախարարությունը չի հրաժարվել նախկինում որդեգրած մոտեցումից, և կատարված առաջարկների հիման վրա Միջոցառումների ծրագրից հանել է ընդհամենը 3 միջոցառում

¹⁵ Առանձին միջոցառումների հերթական համարակալման մեջ բաց է թողնված հերթական 27-29-րդ համամարակալմամբ միջոցառումները:

(Միջոցառումների ծրագրի նախկին տարբերակի 32-րդ 35-րդ 36-րդ միջոցառումները),
Էլեկտրոնային հարթակների կարգավորմանը ուղղված միջոցառումների մի մասը
միավորել է երկու միջոցառումների ներքո՝ **22-րդ և 30-րդ Միջոցառումները**, իսկ մի քանի
միջոցառումներ կրկին ներկայացված են առանձին-առանձին՝ **23-րդ, 24-րդ և 31-րդ
Միջոցառումները**:

Մեկ անգամ ևս հայտնում ենք, որ նման մոտեցմամբ առաջնորդվելիս կարող ենք բախվել
մի իրավիճակի, երբ գործադիր իշխանության մարմինների կողմից՝ իրենց
գործունեության տարեկան միջոցառումների զգալի մասը՝ այդ թվում՝ Էլեկտրոնային
համակարգերի արդիականացմանը կամ վերջիններիս ամենօրյա գործունեության
արդյունավետության բարձրացմանը միտված *մի շարք միջոցառումներ մեխանիկորեն
կդիտարկվեն որպես հակակոռուպցիոն միջոցառումներ և տեղ կգտնեն
ռազմավարությունում՝ առանց կոռուպցիոն ռիսկերի նախապես վերհանման, դրանց
զնահատման և այն արդյունքային ցուցանիշների հստակ ամրագրման, որոնք
երաշխավորելու են այդ ռիսկերի էապես նվազումը կամ չեզոքացումը*:

Այս պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել հակակոռուպցիոն ռազմավարությունների
վերաբերյալ *Կուսլա Լուսպուրի հայտարարությունում տեղ գտած այն սկզբունքը, որ
հակակոռուպցիոն ռազմավարությունների կազման ժամանակ համակարգված և
համապարփակ մոտեցում պետք է ցուցաբերվի, ռազմավարությունները պետք է կազմվեն
համընդհանուր ամբողջական մոտեցմամբ՝ միննույն ժամանակ հաշվի առնելով ոլորտին
հատուկ անհրաժեշտությունները*, ինչպես նաև ՏՀԶԿ զեկույցի 1-ին առաջարկության 2-րդ
կետը, որով առաջարկվում է *ռազմավարության նախագծում ներառել կոռուպցիայի դեմ
պայքարում խոցելի համարվող և առաջնահերթ լուծում պահանջող այնպիսի հավակնոտ
միջոցառումներ, որոնցում, արդեն իսկ բացահայտված կոռուպցիոն ռիսկերի
հաղթահարման միջոցներ կսահմանվեն*:

XVI. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում հայեցողական
լիազորությունների շրջանակի վերհանում և հստակեցում (Միջոցառում 26):

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ նախ պարզ չէ, թե ինչու վերոնշյալ միջոցառումը
ներառված է Միջոցառումների ծրագրի «(Էլեկտրոնային կառավարման գործիքների
ներդրում, պետական կառավարման գործընթացին հասարակության մասնակցության
մեխանիզմների ներդրում և կատարելագործում, վարչարարության պարզեցում)» բաժնում:
Եթե հիմնավորումն այն է, որ պետական և տեղական ինքնակառավարման

մարմիններում հայեցողական լիազորությունների շրջանակի վերհանումն ու հստակեցումն տանելու է վարչարարության պարզեցման, պետական կառավարման գործընթացին հասարակության մասնակցության մեխանիզմների ներդրման, թափանցիկ և հաշվետու գործելաոճի ապահովման, ապա պետք է նշենք, որ Միջոցառումների ծրագրի 6-րդ և 7-րդ միջոցառումներով նախատեսվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա հակակոռուպցիոն, այդ թվում՝ ներքին բարեվարքության գործողությունների ծրագրերի ներդրում, ինչը, ինքնին ենթադրելու է նաև այդ մարմինների լիազորությունների, այդ թվում հայեցողական, շրջանակի ինքնագնահատման իրականացում և համապատասխան միջոցառումների ձեռնարկում: Հետևաբար գտնում ենք, որ առանձին միջոցառում նախատեսելու անհրաժեշտությունն առկա չէ:

XVII. **«Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում (Միջոցառում 45):**

Հաշվի առնելով, որ վերոնշյալ միջոցառումը նախատեսված է Միջոցառումների ծրագրի «Հանրային իրազեկում և հակակոռուպցիոն կրթություն» բաժնում, հարկ ենք համարում նշել, որ *Կոալիցիան և ԻՀԱ-ն նախորդ անգամ իր կարծիք-դիրքորոշում և առաջարկությունների մեջ անդրադարձել էր հակակոռուպցիոն կրթության ներդրման ուղղությամբ համակարգային մոտեցում որդեգրում անհրաժեշտության մասին՝ շեշտելով, որ միջոցառումների ծրագրի համանուն բաժնում ներառված թվով 8 միջոցառումները ոչ միայն չեն կարող համարվել բավարար երկրում հակակոռուպցիոն կրթությունը բովանդակային հենքի վրա դնելու, այլ նաև խնդրահարույց է երկրի եռաստիճան կրթական համակարգում այն ներդնելու տեսանկյունից:* ԻՀԱ-ն և Կոալիցիան գտել են, որ հակակոռուպցիոն կրթությունը պետք է ունենա մեկ հիմնական նպատակ՝ ժողովրդին դաշնակից դարձնելը կոռուպցիայի դեմ պայքարում, և վերջինս պետք է ունենա անկյունաքարային նշանակություն և *առաջարկել էր ներդնել էթիկայի, բարեխղճության և հակակոռուպցիոն թեմաների ուսուցման մոդուլներ նախադպրոցական, հանրակրթական և բարձրագույն և մասնագիտական կրթական հաստատություններում՝ հաշվի առնելով նշյալ հաստատություններում ուսում ստացող անձանց տարիքային առանձնահատկությունները:* Սակայն ՀՀ արդարադատության նախարարությունը վերոնշյալ առաջարկությանն ի պատասխան նշել է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների

դասավանդման ծրագրերում հակակոռուպցիոն առարկաների ներառմանը և դասավանդմանն առնչվող միջոցառում նախատեսել է, սակայն այլ մակարդակներում հակակոռուպցիոն առարկաների դասավանդումը քննարկման փուլում է:

Միանշանակ դրական գնահատելով բարձրագույն ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառումը՝ գտնում ենք, որ նմանատիպ առարկայի ներառումը նախադպրոցական, հանրակրթական և միջին մասնագիտական կրթական ծրագրերում ևս պետք է պարտադիր համարել և այս ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկել հենց այս փուլից սկսած:

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ

09.08.2019թ.